

## ՍՈՒՐԻԱ ԿՐ ՃԱՆՉՆԱՅ ԼՈՒԿԱՆՍԵՔԻ ԵՒ ՏՈՆԵՃՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԻՆՔՆԻՉԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Սուրիա յայտարարեց Լուկանսքի եւ Տոնեճքի ժողովրդական Յանրապետութիւններու անկախութեան եւ ինքնիշխանութեան ճանաչումը:

Սուրիոյ Արտաքին գործոց Նախարարութեան պաշտօնական աղբիւրը Չորեքշաբթի, 29 Յունիսին ՍԱՆԱ-ին յղած յայտարարութեան մէջ յայտ-



նեց. «Այս մէկը տարբեր ոլորտներու մէջ յարաբերութիւններ հաստատելու ընդհանուր կամքի եւ փափաքի մարմնացումն է, քանի որ Սուրիան որոշած է ճանչնալ Լուկանսքի եւ Տոնեճքի ժողովրդական երկու հանրապետու-

թիւններու անկախութիւնն ու ինքնիշխանութիւնը»:

Աղբիւրը աւելցուց. «Նախարարութիւնը կապեր պիտի հաստատէ երկու երկիրներուն հետ՝ ամրապնդելու գործակցութիւնը եւ սահմանուած կանոններուն համապատասխան հաստատելու դիւանագիտական յարաբերութիւններ»:

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԸՆԴՈՒՆԱԾ Է ՍՈՒՐԻՈՅ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՅՈՐ ԴԵՄՊՆԸ

Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան 28 Յունիսին ընդունած է Սուրիոյ Արտաքին Յանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Նորա Արիսեանը:

Ինչպէս «Արմէնփրես» կը յայտնէ, Ալէն Սիմոնեան շնորհաւորած է Արիսեանը Հայաստանի Հանրապետութեան մէջ Սուրիոյ Արտաքին Յանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան նշանակուելուն առիթով:

«Ուրախ եմ, որ Հայաստանի մէջ Սուրիան կը ներկայացնէ հայազգի դիւանագետը: Կը կարծեմ, որ Ձեր նշանակումը մեր բարեկամ երկիրներու համար նաեւ խորհրդանշական է, եւ մօտ ապագային շատ առիթներ կ'ըլլան արդէն գործնական հանդիպումներու համար»:



ըսած է Ալէն Սիմոնեան:

ՀՀ ԱԺ նախագահը ցաւով անդրադարձած է այս տարիներու ընթացքին սուրիացի բարեկամ ժողովուրդին, այդ կարգին՝ սուրիահայ համայնքին կրած զրկանքներուն: Ան միաժամանակ համոզմունք յայտնած է, որ սուրիացիները, ինչպէս եւ հայ ժողովուրդը, կը յաղթահարեն երկարատեւ ճգնաժամի ծանր հետեւանքները եւ առաջընթացի փուլ կը մտնեն: Ալէն Սիմոնեան երախտագիտութիւն յայտնած է Սուրիոյ դպրոցական դասագիրքերուն մէջ Հայոց Յեղասպանութեան նիւթը ներառելու դեսպանին նախաձեռնութեան համար:

Կողմերը անդրադարձած են Հայաստանի եւ Սուրիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 30-ամեակի շրջագիծին մէջ միջխորհրդարանական համագործակցութեան՝ շեշտելով բարեկամութեան խումբերու դերակատարութիւնը:

Ալէն Սիմոնեան յայտնած է, որ Հայաստան կը շարունակէ ի գործ դնել իր ջանքերը՝ տարածաշրջանին մէջ տեւական կայունութիւն հաստատելու համար:

Հանդիպման աւարտին ՀՀ ԱԺ նախագահը բարի երթ մաղթած է Սուրիոյ դեսպանին դիւանագիտական իր առաքելութեան մէջ՝ աւելցնելով, որ պատրաստ է աջակցիլ անոր ռեւէ նախաձեռնութեան՝ ի նպաստ երկու երկիրներու գործակցութեան զարգացման եւ խորացման:

## ԱԶԳ. ԲԱՐԷՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ 2021-2022 ՏԱՐԵՆԴԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ՀՈՒՆՉՔԸ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Ս. Եպս. Զօպուեանի, Շաբաթ, 25 Յունիս 2022-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ազգ. Բարեն Եփեփէ ճեմարանի շրջափակէն ներս տեղի ունեցաւ 2021-2022 ուսումնական տարեշրջանի միջնակարգի աւարտական հանդէսը:



Միջնակարգի շրջանաւարտները շնորհաւորելու եկած էին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանքի հսկիչ Հոգ. Տէր Գերոզ Աթ. Գարակեօզեան, Հոգ. Տէր Մանուկ Աթ. Պարիխանեան, Սուրիոյ Խորհրդարանի անդամ Ժիրայր Բիսեան, Բերիոյ Թեմի Ազգ. Վարչութիւնը, ինչպէս նաեւ բարեսիրական, մշակութային եւ մարզական միութիւններու ներկայացուցիչները, ճեմարանի խնամակալութիւնը, տնօրէնութիւնը, Ուսուցչական Կազմը եւ Շրջանաւարտից Միութիւնը:

Հանդէսը բաց յայտարարուեցաւ ու ներկաները մէկ վայրկեան յոտընկայս լռութեամբ յարգեցին Նահատակներուն յիշատակը: Աշակերտական

Ժիրայր Կարապետեան  
 Շաբ.՝ Էջ 4 ➤

## ՓԱՇԻՆԵԱՆԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՒ ԶԵՄԱԿԱՆ ՀԱՐՅՈՒՄ ՈՒՂԱՐԿԵԼԷ ՀՐԱԺԱՐՈՂ ԶԼՄ-ՆԵՐՈՒՆ ԹԻՒՆ ՀԱՍԱԾ Է 54-Ի

Երկուշաբթի, 27 Յունիսին, Նիկոլ Փաշինեան մամուլի ասուլիսի իրաւիւրած էր, որուն նպատակն էր ՉԼՄ-ներուն ընծեռել մեկական հարցում ներկայացնելու կարելիութիւն: Փորձը ցոյց տուած է, որ նման «առցանց շփումները» տեղի կ'ունենան նախապատրաստուած բեմադրումով, այդ նախաձեռնութիւններուն կը հնչեն հիմնականօրէն իշխանամերձ լրատուամիջոց-



ներու, թելեկրամ-ալիքներու, պոլկըրներու հարցումները, որոնք, ըստ ամենայնի, նախապէս կը համաձայնին նախաձեռնութեան կազմակերպիչներուն հետ, իսկ այլ լրատուամիջոցներու պարագային հարցերը կամ կ'անտեսուին, կամ կը խմբագրուին, կամ կ'աղաւաղուին: Նկատի առնելով այդ նախադէպերը՝ մենք՝ Ներքոյ ստորագրեալ լրատուամիջոցներու խմբագիրներս, իրապարակաւ կը հրաժարինք ձեւական հարցում ուղարկելէ: Կոչ կ'ուղղենք վարչապետի աշխատակազմին վերադառնալու ասուլիսի դասական ձեւին:

Յայտարարութեան միացած են՝

1. Բազրատ Եսայեան - «Երկիր Մետիա» պատկերասփիւռի ընկերութեան տնօրէն
2. Արամ Աբրահամեան - «Առաւօտ» օրաթերթի գլխաւոր խմբագիր
3. Սաթիկ Սէյրանեան - «168 Ժամ» թերթի եւ «168.am» կայքի գլխաւոր խմբագիր

Շաբ.՝ Էջ 3 ➤



### Խմբագրական

## ՍՈՒՐԻԱ-ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Սուրիոյ պատերազմի տարիներուն, Սուրիոյ յարաբերութիւնները արաբական կարգ մը երկիրներու հետ խորքային փոփոխութիւններ չկրեցին, որովհետեւ արաբական երկիրներու մեծամասնութիւնը Սուրիոյ դէմ ճակատ բանալու ծուղակին մէջ չինկաւ, թէեւ կարգ մը երկիրներ արտաքին ուժերու ազդեցութեան ներքոյ նուազեցուցին իրենց յարաբերութիւններուն կշռոյթը որոշ վերապահութեամբ, առժամապէս փակեցին իրենց դեսպանատուները, սակայն չխափեցին իրենց կապը Սուրիոյ հետ: Այլ խօսքով՝ յարաբերութիւնները որոշ արաբական երկիրներու հետ միայն ձեւականօրէն նուազ աշխուժութիւն ապրեցան, մինչդեռ կապը մնաց անկաքստելի:

Սուրիան արաբական երկիրները դիտեց ոչ թէ անոնց վարչակարգերու, այլ ժողովուրդներուն պիտմակէն, որուն համար ալ դատապարտման ոճը չօգտագործեց արաբական երկիրներու հետ իր յարաբերութիւններուն մէջ, մնաց իրապաշտ, քաջ իմանալով որ աշխարհաքաղաքական պատկերը ուշ կամ կանուխ պիտի փոխուի եւ Միջին Արեւելքի մէջ եական հրամայական պիտի դառնայ արաբական երկիրներու գործակցութիւնը տարածաշրջանի մարտահրաւերներուն ի տես:

Սուրիան այսօր դրականօրէն կ'արժեւորէ արաբական երկիրներու հետ գործակցութիւնը, միեւնոյն ատեն իր դաշնակիցներուն, յատկապէս Իրանի եւ Ռուսիոյ հետ իր գործակցութիւնը՝ ամերիկա-իսրայէլեան ու թրքական շարունակուող սպառնալիքներուն դիմաց:

ԱՄՆ-ի նախագահ Ծօ Պայտընի Միջին Արեւելք այցելութիւնը ուղղուած պիտի ըլլայ տարածաշրջանին մէջ ԱՄՆ-ի կողմնակից զինուորական դաշինքի մը կազմաւորման, բնականաբար ի նպաստ Իսրայէլի եւ ի վնաս Իրանի ազդեցութեան գօտիին:

Սուրիա աշխարհաքաղաքական ներկայ զարգացումներուն լոյսին տակ կը ջանայ պաշտպանել երկրի ազգային շահերն ու անվտանգութիւնը, հաւասարապէս արժեւորելով ԵՄ-ի իր ռազմավարական դաշնակիցներուն՝ Ռուսիոյ ու Իրանի, ԵՄ-ի արաբական երկիրներու հետ իր յարաբերութիւնները: Միւս կողմէ Թուրքիան կը համարէ սուրիական տարածքներ բռնագրաւած արտաքին ուժ, որուն, ինչպէս նաեւ ԱՄՆ ուժերուն սուրիական տարածքներէն դուրս բերումը առաջնային պէտք է ըլլալ սուրիական տագնապի լուծման յառաջիկայ բանակցութիւններուն մէջ:

Այս բոլորին լոյսին տակ հեռու չէ նաեւ պաղեստինեան կարգ մը շարժումներու հետ Սուրիոյ յարաբերութեանց վերականգնումը՝ սանձելու ԱՄՆ-Իսրայէլ նախատեսուող միջամտութիւնները տարածաշրջանի արաբական երկիրներու ապահովական հարցերուն:

«Գ.»

-Սուրիոյ Փոխադրութեան Նախարարութիւնը յայտարարեց, որ Դամասկոսի Միջազգային Օդակայանը, յետ իսրայէլեան հրդեհակոծումին, նորոգուած ու բանիլ սկսած է Զինգաբթի, 23 Յունիսէն սկսեալ: Փոխադրութեան նախարարը դիտել տուաւ, որ սուրիացի արհեստաւորներն ու մասնագէտները օրն ի բուն աշխատեցան, տքնեցան ու յաջողեցան վերականգնել օդակայանը: Արտաքին եւ ներքին բոլոր թռիչքներուն ժամանակացոյցը յստակացած է արդէն:



-Երկուշաբթի, 27 Յունիս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ հեռաձայնային հաղորդակցութիւններու նախարար Իյատ Խաթիպ հանդիպում մը ունեցաւ Սուրիոյ մէջ Պահրէյնի Թագաւորութեան դեսպան Ուսահիտ Սուպարաք Սայյարի հետ: Զանդիպման ընթացքին կողմէրը խորհրդակցեցան երկու երկիրներուն միջեւ հեռաձայնային հաղորդակցութեան եւ համացանցի արհեստագիտութեան ոլորտներուն մէջ գործակցութիւնը զարգացնելու միջոցներուն մասին:



Իր կարգին նախարար Խաթիպ շեշտեց, որ Սուրիա գորավիզ կը կանգնի Պահրէյնի՝ 2023-2026-ի միջեւ հեռաձայնային հաղորդակցութեան միջազգային միութեան խորհուրդին մէջ Պահրէյնի անդամակցութեան քուէարկութիւններուն գծով:

-Երեքշաբթի, 28 Յունիս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սալամիէի արուարձանին «Ապու Լաֆֆէ» զիւղին մէջ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն տեղադրած պայթուցիկ ականներուն հետեւանքով, արձանագրուեցան երկու զոհ եւ երկու վիրաւոր: Արքիւրը անցուց, որ վիրաւորները անմիջապէս փոխադրուեցան Սալամիէի Ազգային Զիւնտանցը:



-Երեքշաբթի, 28 Յունիս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ Զարհի-դի եւ Զանքային Զարստութեան Նախարարութիւնը յայտարարած է, որ 28 Յունիսէն սկսեալ, քարիւղային արտադրութիւններու բաշխման քանակը պիտի բարելաւուի, հետեւաբար պէնզին եւ մագուր ստանալու նամակի հասանելիութեան տեւողութիւնը պիտի նուազի:



Նախարարութիւնը հաստատեց, որ պէնզինի բաշխման քանակը օրական 3.6 միլիոն լիթրէն բարձրացաւ 4 միլիոն լիթրի, իսկ մագուրինը՝ օրական 4.2 միլիոն լիթրէն 4.5 միլիոն լիթրի:

-Չորեքշաբթի, 29 Յունիս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ Կենտրոնի եւ Տեղական Ինքնակառավարման Նախարարութիւնը Զինաստանէն ստացաւ 100 փոխադրակառք, որոնք պիտի օգտագործուին ներքին փոխադրութեան համար:



Նախարարութիւնը յայտնեց, թէ Զինաստանի նուիրած փոխադրակառքերը դրական ազդեցութիւն պիտի ունենան ներքին փոխադրութեան շարժումին վրայ:



## Լուրեր Հայաշխարհին

### ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ. «ՄԵՉ ՊԵՏՔ Է ՅԱՍԱՌՈՒԹԻՒՆ, ՄԻԱՍՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՆԱՀԱՆՉ ՊԱՅՔԱՐ»

Երեքշաբթի, 28 Յունիս 2022-ին, ՀՀ Գաղտնիության Գերագույն Մարմինի ներկայացուցիչ, Ազգային ժողովի փոխնախագահ Իշխան Սաղաթելեան հրապարակած է յայտարարություն մը, որուն մէջ կ'անդրադառնայ Հայաստանի վերջին զարգացումներուն:

Յայտարարութեան ամբողջութիւնը ստորեւ.

«Դաւաճանների այս իշխանութիւնը չի սպասարկում ո՛չ Արցախի, ո՛չ Հայաստանի Հանրապետութեան եւ ո՛չ էլ հայ ժողովրդի շահը. դա ակըն-յայտ փաստ է, եւ այդ մասին խօսում ենք ամէն օր:

«Նրանք շարունակում են երկիրը կտոր-կտոր թշնամու յանձնելու քաղաքականութիւնը լուծելով մէկ խնդիր իրաւական ուժ տալ Պաքում ու Անգարայում մշակուած օրակարգերին: Իսկ երբ տեսնում են, որ ժողովուրդը ոտքի է կանգնում, սկսում են սպառնալ պատերազմով յայտարարելով, թէ ատրպէյճանցիները Հայաստանի դէմ նոր պատերազմի օրինականութիւն են կուտակում:

«Սիրելի՛ հայրենակիցներ,

«Ամենայն պատասխանատուութեամբ յայտարարում եմ թշնամին այդ «օրինականութեան» բաւարար պաշար ունի: Եւ այդ «օրինականութիւն» անունը Նիկոլ Փաշինեան է: Հայաստանն ու Արցախը կործանարար այս ընթացքից փրկելու միայն մէկ ճանապարհ կայ՝ այս իշխանութիւնների հե-

ռացումը: Դրա համար նոր փաստարկներ պէտք չեն: Ամէն ինչ վաղուց պարզ է: Դրա համար մեզ պէտք է դիմադրութիւն թշնամու եւ Նիկոլի օրակար-



գին, մեզ պէտք է յամառութիւն, միասնութիւն եւ աննահանջ պայքար: Սա է մեր ժողովրդի գլխաւոր խնդիրը, որը միասին լուծելու ենք:

«Յունիսի 1-ին ժամը 19:30-ին, հանրահաւաք Ֆրանսայի հրապարակում»:

### ՓԱՇԻՆԵԱՆԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՒ...

Սկիզբ՝ էջ 1

- Լոր խմբագիր, Հայաստանի ժուռնալիստներու միութեան նախագահ
- 4. Աննա Իսրայելեան - «Aravot.am» կայքի գլխաւոր խմբագիր
- 5. Արմինէ Օհանեան - «Հրապարակ» օրաթերթի եւ «Hraparak.am» կայքի գլխաւոր խմբագիր
- 6. Փիրուգա Մելիքսեան - «Իրատես տե ֆաքթօ» թերթի գլխաւոր խմբագիր
- 7. Արմենիկա Զիվերեան - NEWS.am կայքի գլխաւոր խմբագիր
- 8. Վահէ Սարգսեան - «Երկիր» թերթի գլխաւոր խմբագիր
- 9. Սոնա Տուզեան - «Pastinfo» լրատուական փորթալի ղեկավար
- 10. Շաւարշ Գեորգեան - «Հ2» պատկերասփիւռի ընկերութեան «Լրաբեր» լրատուական ծրագրի ղեկավար
- 11. Սեւակ Յակոբեան - Yerevan.today լրատուական-վերլուծական կայքի գլխաւոր խմբագիր
- 12. Զնար Մանուկեան - «Ժողովուրդ» օրաթերթի եւ «Armlur.am» կայքի գլխաւոր խմբագիր
- 13. Տարեւ Այվազեան - «Armday.am» կայքի գլխաւոր խմբագիր
- 14. Հրանդ Մելիք-Շահնազարեան - «Times.am» ելեկտրոնային աղբիւրի գլխաւոր խմբագիր
- 15. Անժելա Նալպասեան - PARA TV-ի գլխաւոր արտադրող
- 16. Յասմիկ Սարգսեան - 7or.am կայքի գլխաւոր խմբագիր
- 17. Կարէն Անտիսեան - Blognews.am կայքի գլխաւոր խմբագիր
- 18. Փայլակ Ֆահրատեան - Irakanum.am կայքի գլխաւոր խմբագիր
- 19. Աստղիկ Մաթեոսեան - AntiFake.am կայքի գլխաւոր խմբագիր
- 20. Պորիս Մուրադի - «Politik.am» կայքի գլխաւոր խմբագիր
- 21. Ժաննա Ծառուկեան - LIVEnews.am կայքի գլխաւոր խմբագիր
- 22. Ֆլորա Նախշբարեան - «Գոլոս Արմենիի» թերթի եւ կայքի գլխաւոր խմբագիր
- 23. Տիգրան Գալստեան - MediaHub.am կայքի գլխաւոր խմբագիր
- 24. Անահիտ Ոսկանեան - Panorama.am լրատուական կայքի գլխաւոր խմբագիր
- 25. Արտակ Ճաղարեան - «Փաստ» թերթի գլխաւոր խմբագիր
- 26. Գագիկ Շամշեան - SHAMSHYAN.com-ի գլխաւոր խմբագիր
- 27. Գեորգ Էմին - Stetnews - լրատուական կայքի գլխաւոր խմբագիր
- 28. Անի Կարապետեան - «Presstime.am» կայքի գլխաւոր խմբագիր
- 29. Երուանդ Պոզոյեան - Zham.am կայքի գլխաւոր խմբագիր
- 30. Յովհաննէս Գալաճեան - «Իրաւունք» թերթի գլխաւոր խմբագիր
- 31. Յակոբ Աւետիքեան - «Ազգ» թերթի գլխաւոր խմբագիր
- 32. Սեւակ Յակոբեան - Լիբանանի «Չարթօնք» թերթի գլխաւոր խմբագիր
- 33. Արտաշէս Շահպազեան - ՀՀ Բիւրոյի «Դրօշակ» պաշտօնաթերթի եւ Arfd.am կայքի գլխաւոր խմբագիր
- 34. Չառա Նազարեան - Le Courrier d'Erevan տեղեկատուական կայքի ղեկավար
- 35. Վարդուհի Իշխանեան - Ankakh.am-ի գլխաւոր խմբագիր
- 36. Յարութիւն Յարութեանեան - «Ծրագրի» պատկերասփիւռի ընկերութեան տնօրէն
- 37. Գագիկ Ասատրեան - Alternativ.am կայքի գլխաւոր խմբագիր
- 38. Վահագն Գարագաշեան - Քանադայի «Հորիզոն» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր
- 39. Շահան Գանտահարեան - Լիբանանի «Ազդակ» թերթի եւ կայքի

- գլխաւոր խմբագիր
  - 40. Վիգէն Աւագեան - «Վանայ ծայն» (Լիբանան) - գլխաւոր խմբագիր
  - 41. Դերենիկ Մելիքեան-Թեհրանի «Ալիք» օրաթերթի գլխաւոր խմբագիր
  - 42. Արամ Շահնազարեան - «Ալիք-online» (Իրան) - գլխաւոր խմբագիր
  - 43. Չարմիկ Պօղիկեան - Սուրիոյ «Գանձասար» թերթի գլխաւոր խմբագիր
  - 44. Ռուբէն Գեորգեան - Սուրիոյ «Ռատիօ Երազ»-ի գլխաւոր խմբագիր
  - 45. Չարեհ Աճեմեան - «Օրակարգ» (Արեւմտեան Ամերիկա) - գլխաւոր խմբագիր
  - 46. Չաւեն Թորիկեան - «Հայրենիք» (Արեւելեան Ամերիկա) - գլխաւոր խմբագիր
  - 47. Չաւեն Լիլոզեան - «Արցախի Ապառաժ» թերթի գլխաւոր խմբագիր
  - 49. Լեւոն Պարոնեան - Արեւմտեան ԱՄՆ «Օրակարգ» պարբերականի անգլերէն բաժնի խմբագիր
  - 50. Զորոբ Էքիզեան - Յունաստանի «Ազատ Օր» թերթի խմբագիր
  - 51. Էմանուէլ Մկրտչեան - «Արմինֆօ» լրատուական գործակալութեան գլխաւոր տնօրէն
  - 52. Սեւակ Մելիքեան - ՄԱՍՈՒԼ.am լրատուական գործակալութեան տնօրէն
  - 53. Զրիստինէ Ասատրեան - Henaran.am-ի գլխաւոր խմբագիր
  - 54. Նելլի Ալեքսանեան - Lurer.com-ի տնօրէն
- Յայտարարութիւնը բաց է միանալու համար:

ՊԵՏՔԵՐՈՒՄՆԵՐ  
ՀԱՅ ԳԻՐԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳԵՏԵՋՐԻՆ

ԳՐԱԿԱՆԱՇՈՒՆՉ  
ՊՏՈՅՏ՝  
ԱՅԲՈՒԲԵՆԻ ՏԱՌԵՐՈՒՆ ՀԵՏ

**«Գանձասար» շնորհակալութեամբ ստացաւ Լեւոն Շառոյեանի**

**«ՊԵՏՔԵՐՈՒՄՆԵՐ  
ՀԱՅ ԳԻՐԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳԵՏԵՋՐԻՆ  
Գ. ՀԱՏՈՐ»  
ԵՒ  
«ԳՐԱԿԱՆԱՇՈՒՆՉ ՊՏՈՅՏ՝  
ԱՅԲՈՒԲԵՆԻ ՏԱՌԵՐՈՒՆ ՀԵՏ»**

**գիրքերը, հրատարակուած Հալէպ, 2022:**



## ԱԶԳ. ԶԱՐԷՆ ԵՓՓԷ...

Մկրտչի Էջ 1

Երգչախումբը մեկնաբանեց Սուրիոյ եւ Հայաստանի Հանրապետութեան զոյգ քայլերգները:

Հայերէն բացման խօսքով հանդես եկաւ Եսթեր Կիլիտալեան, իսկ արաբերէն՝ Նանոր Լախոյեան: Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի 9-րդ կարգի երգչախումբը յաջորդաբար երգեց փունջ մը հայերէն եւ արաբերէն երգեր, գեղարուեստական ղեկավարութեամբ Ռուզան Պարսումեանի:

Երգչախումբին յաջորդեցին խմբային հայերէն եւ արաբերէն ասմունքներ, իսկ Թաթուլ Ալթունեանի «Եաման Եար»-ը նուազեցին խումբ մը աշակերտներ:

Արաբերէն ուղերձը ընթերցեց Շողակ Խրոյեան, իսկ Հայերէն ուղերձը՝ Արփի Արապանեան: Անոնք 9-րդ կարգի աշակերտութեան անունով շնորհակալութիւն յայտնեցին Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի Տնօրէնութեան,



ուսուցչական կազմին եւ ծնողներուն տարուան ընթացքին իրենց ցուցաբերած հոգատարութեան եւ խնամքին համար: Ապա շնորհակարտեցին իրենց դասընկերներ-դասընկերուհիները եւ մաղթեցին, որ անոնք նորանոր յաջողութիւններ արձանագրեն: Անոնք աշակերտներուն անունով խոստացան ըլլալ ուսման, գիտութեան եւ ազգային բարձր իտեալներու հաւատարիմ ճեմարանականներ՝ կամքի ուժով եւ հաւատքի զօրութեամբ:

Այնուհետեւ իր սրտի խօսքը ուղղեց Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի պետական տնօրէն Ապտալ Համիտ Մասրի՝ շնորհակալութիւն յայտնելով Հալեպի Կրթական Տնօրէնութեան, թեմիս առաջնորդին, վարժարանի խնամակալութեան, տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ ծնողներուն, որոնց միասնական աշխատանքին շնորհիւ աշակերտները կը հասնին յաջողութեան:



Ապա իր սրտին խօսքը արտասանեց ճեմարանի շրջանաւարտ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեմանքի հսկիչ Հոգ. Տէր Գեորգ Աբեղ. Գարակեօզեան: Ան շեշտեց, որ հայ աշակերտը իր ինքնութիւնը ճանչցած է այս կրթօճախին մէջ դաստիարակուելով, ապա խօսքը ուղղելով աշակերտութեան ըսաւ. «Մեր եկեղեցին հպարտ է ձեզ մով, որովհետեւ դուք կը գոյատևէք անսասան ոգիով եւ անձնուէր աշխատակրով»:

Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի տնօրէն Յակոբ Բիլէճեան ուսումնակրթական տեղեկագիրը ընթերցելէ ետք, յայտնեց որ այս տարի ճեմարանը կը տօնէ իր ադամանակէայ 75-րդ տարեդարձը, անդրադարձաւ ճեմարանի ուսումնակրթական առաքելութեան ու հայեցի դաստիարակութեան կարե-



ւորութեան, շեշտելով որ ճեմարանը լոկ կրթական հաստատութիւն մը չէ, այլ՝ մարդակերտման դարբնոց մը:

Բիլէճեան այնուհետեւ շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Զօր, Ազգ. վարչութեան, Ուսումնական խորհուրդին, ճեմարանի խնամակալութեան,

պետական տնօրէնին, Շրջանաւարտից Միութեան Վարչութեան, ուսուցչական եւ վարչական կազմերուն, երգչախումբի ղեկավարին, խմբային ասմունքներու պատասխանատուներուն, Բերիոյ Թեմի «Դպրոց հիմնադրամ»ին, ԱԶԵ ճեմարանի Զալիֆորնիոյ Ընկերակցութեան, անոր Հալեպի յանձնախումբին, անհատ բարերարներուն ու բոլոր անոնց, որոնք նիւթապէս եւ բարոյապէս ճեմարանին կողքին են: Աւարտին ան իր խօսքը ուղղելով ճեմարանականներուն ըսաւ, որ երեք տարուան աշխատանքին արդիւնքով դուք հասաք այս օրուան ու մաղթեց, որ պետական քննութիւններուն արդիւնքները հպարտութիւն առաջն բերին:



Հուսկ, ան ուժ, կորով եւ համբերութիւն մաղթեց երկրիս իմաստուն վսեմաշուք նախագահ տոքթ. Պաշարալ-Ասատին, որպէսզի Սուրիան առաջնորդէ դէպի խաղաղութիւն:

Ապա բեմ հրաւիրուեցաւ Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի Շրջանաւարտից Միութեան վարչութեան անդամ Վերա Թովմասեան՝ պարգեատրելու 2020-2021 ուսումնական տարեշրջանի 9-րդ կարգի պետական քննութեանց առաջին երեք դիրքերը գրաւող աշակերտներ՝ Անէն Խրոյեանը (առաջին), Աննա Պետրոսեանը (երկրորդ) եւ Մայք Գեւոյեանը (երրորդ): Պարգեատրուեցան նաեւ 2021-2022 տարեշրջանի առաջնակարգ հետեւեալ աշակերտները՝ 7-րդ կարգ. - Սանտրա Պապիկ, Մարիա Գասապեան, Փաթիլ Շաթոյեան, 8-րդ կարգ. - Արշալոյս Տիւպերեան, Սելինա Երեցեան, Սելիկ Մկրտիչեան:



Այնուհետեւ բեմ բարձրացան 2021-2022 տարեշրջանի աշակերտները: Առաջնորդ Սրբազան Զօր ձեռամբ միջնակարգի վկայական ստացան 48 շրջանաւարտներ, իսկ հայերէն լեզուի առաջնակարգ ուսանողները տնօրէնութեան կողմէ գովասանագրերու արժանացան:

Օրուան եզրափակիչ պատգամը ուղղեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գեորգ Տէր Մասիս Ս. Եպս. Չօպուեան, որ ըսաւ. «Կեանքի փորձորիկներուն դիմաց այս կառոյցը իր սիւներով, տնօրէններով, բարերարներով, մշակներով պայքարեցաւ եւ յաղթանակեց: 75-ամեակ կը նշանակէ յաղթանակ եւ այս բոլորը ծառայութեան, գոհողութեան արդիւնք են: 75 տարի հալեպահայութիւնը տէր դարձաւ: այս դպրոցին եւ հոսկէ ծնունդ առին ղեկավարներ, առաջնորդներ ու հայ մայրեր»:

Աւարտին ան դիտել տուաւ, որ իւրաքանչիւր ճեմարանականի պարտքն է տէր կանգնել եւ ծառայել ազգին ու հայրենիքին: Հանդէսը փակուեցաւ ճեմարանի քայլերգով, կատարողութեամբ երգչախումբին: Հանդէսի խրախճանքը շարունակուեցաւ «Տիգրանեան» պարտեզէն ներս, կազմակերպութեամբ ճեմարանի Շրջանաւարտից Միութեան Վարչութեան, վկայուած աշակերտներու բարձր տրամադրութեամբ, ծնողներու եւ հարազատներու ներկայութեան:

### ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանը կարիքը ունի գիտական նիւթերու եւ լեզուներու դասաւանդման համար վկայեալ ուսուցիչ-ուսուցչուհիներու:

Փափաքողները կրնան դիմել ճեմարանի տնօրէնութեան, հեռաձայնելով հետեւեալ թիւերուն. 4643363-53 / 0967560111

Տնօրէնութիւն Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի

### ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Բերիոյ Հայոց Թեմի Կալուածոց Հոգաբարձութիւնը կարիքը ունի Ազգ. Գերեզմանատունէն ներս աշխատող միջին տարիքի պաշտօնեայի: Աշխատանքի ժամերն են Երկուշաբթի օրուընէ մինչեւ Շաբաթ, առաւօտեան ժամը 9:00-էն մինչեւ յետմիջօրէի ժամը 3:00:

Թեկնածուները իրենց դիմումագիրները պարտին ներկայացնել Ազգ. Առաջնորդարանի Կալուածոց գրասենեակի քարտուղարութեան: Յաւելեալ մանրամասնութեան համար դիմել հետեւեալ հեռաձայնի թիւերուն՝ 2122756 - 2122758:

Բերիոյ Հայոց Թեմի Կալուածոց Հոգաբարձութիւն



# Ս. ՄԻՒՌՆԻ «ՅԱՐՈՒԹԵԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ» ԱՌՋԵՒ

Պարոյր Վրդ. Շերեզեան

Միայն քանի մը օրեր կը բաժնեն մեզ այն պատմական պահէն, որուն համար սպասած ենք եօթը տարի: Նոյնիսկ, Ս. Միւռնի կաթսան, հարսի մը պէս քօղարկուած, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի խորանին վրայ, կը սպասէ այդ երանելի պահուն, երբ ի տես բազմահարիւր ժողովուրդի, պիտի բանայ իր կափարիչը, պիտի «շողարձակէ» իր բուրումնաւետ գօրութիւնը եւ լեցնէ մեր եութիւնը նոր շունչով մը:

Հայ եկեղեցւոյ գեղեցիկ ասանդութեան համաձայն եւ Աստուածաշնչական տուեալներու վրայ հիմնուած, Ս. Միւռնը քառասուն օրեր կը մնայ սուրբ խորանին վրայ՝ առ ի պատրաստութիւն այն մեծ օրուան, երբ Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետի ձեռամբ, եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի մասունք-աջով պիտի օրհնուի: Թե՛ եւ Ս. Միւռնը խորանին վրայ լուռ կերպով հանգչած կը լսէ մեր աղօթքները, սակայն այդ լռութեան մէջ, Ս. Միւռնի աւելի քան չորս տասնեակ բոյսերով, արմատներով եւ ծաղիկներով պատրաստուած իւրը հոգեւոր եւ անտեսանելի կրակով մը կ'եփի: Կարծես Ս. Միւռնի կաթսային արգանդանման ամանին մէջ նոր աշխարհի մը եւ կամ նոր կեանք մը կը գոյանայ մեր տեսողութենէն վեր՝ խորհրդաւոր կերպով: Այս մէկը կարելի է տեսնել միայն հաւատքի աչքերով եւ գայն գգալ՝ աղօթական սրտով: Սակայն անկա, մեզի ալ՝ միաբաններու եւ հաւատացեալներուս կը յիշեցնէ, որ մենք ալ պատրաստուինք աղօթքով եւ երկիւղածութեամբ՝ ընդունելու համար Ս. Հոգիին լիառատ շնորհները:

Որքան օրերն ու ժամերը տակաւ առ տակաւ կը մօտենան Յուլիս մէկին, այնքան աւելի կ'արագանան սրտիս զարկերը: Ս. Միւռնի կաթսային առջեւ աղօթքի կեցած պահուն, կը պատկերացնեմ այդ վայրկեանը, երբ հարսի մը պէս, կաթսան մեզ ու եկեղեցին խորհրդանշելով, պիտի բանայ իր քօղը, պիտի ընդունի Ս. Հոգիին խորհրդաւոր օրհնութիւնը եւ պիտի դառնայ բոլորովին նոր ու կենդանարար նիւթ: Այդ առիթը, այնպիսի պահ մը պիտի ըլլայ բոլորիս համար, որ մեր մարմնին վրայ արդէն իսկ կ'ընկնէ Ս. Միւռնին նշանը «պիտի շարժի» ու մենք պիտի վերանորոգուինք: Պիտի յիշեցնէ անգամ մը եւս, որ Ս. Եկեղեցւոյ աւագանի արգանդէն ծնած ըլլալու առընթեր, ծնած ենք նաեւ Ս. Միւռնի կաթսային ամանէն, ուրկէ դուրս «կը բղխի» Ս. Հոգիի նշանը՝ Միւռնը: Միւռնով վերածնած հոգեւորականներս առաւել եւս «պիտի ցնցուինք», որովհետեւ նոյն այս նշանն է, որ մեզ դար-

ձուց նոր մարդ եւ սպասուրներ՝ Հայ եկեղեցւոյ: Հոգեւոր կապով պիտի վերաշնչենք մեր պատկանելիութիւնն ու հաւատարմութիւնը՝ ամբողջն ազուցելով գայն Մեծի Տանն



Կրկիկոյր Կաթողիկոսութեան Սուրբ Աթոռին հետ: Ահաւասիկ, մեր սուրբ աթոռը, Ս. Գրիգոր Լուսաւորիչէն մինչեւ այսօր, Մովսէս մարգարէին պէս այս հոգեւոր ժայռին կը գարնէ իր ծառայութեան ասան, որպէսզի աստուածային շնորհքը հեղու իր անգին ժողովուրդին վրայ:

Կը դիտեմ աւելի երկար Ս. Միւռնի կաթսան եւ պահ մը կը պատկերացնեմ որ կարծես անկա Ս. Յարութեան գերեզմանը ըլլայ իր սկզբնական ժայռով մը փակուած: Երեք օրուան փոխարէն՝ քառասուն օրեր ի վեր Քրիստոսի մարմինը կը հանգչի անոր մէջ, որպէսզի յարութեան կեանքը բանայ մեր առջեւ: Ս. Հարութեան խորհուրդին հետ, Ս. Միւռնն ալ կը պատարագուի իր նկրտեղէն իւրով կաթսային խորհրդաւոր խորութեան մէջ, որպէսզի երբ Յուլիս մէկին կափարիչը բացուի, Ս. Յարութեան Գերեզմանին պէս, հոնկէ ժայթքէ նոր յարութեան եւ կեանքի «լուսէ բոյրը»: Նոր էջ, նոր օր, եւ նոր սկիզբ մը պիտի մեկնարկէ Ս. Միւռնի կաթսային կափարիչին վերացումով: Եւ մենք, ինչպէս Յարութեան օրուան իւրաքանչիւր կիները եւ կամ Քրիստոսի Ս. Ծննդեան խոնարհ մոգերը, հին միւռնը, Էջմիածնայ Ս. Միւռնը, բալասանն ու վարդի իւրի շիշերը մեր ձեռքերուն, պիտի մօտենանք «Ս. Յարութեան Գերեզմանին», որպէսզի մեր ընծաներն ու մեր բաժինը նուիրենք Քրիստոսի: Այլ խօսքով, մեր հինն ու ամբողջ եութիւնը պիտի խառնենք նոր կեանք բուրոյ Ս. Միւռնին մէջ, որպէսզի նոր կեանքի եւ յարութեան շողարձակումը մեր սրտին մէջ առած՝ գայն կրենք նոր եօթ տարիներ եւս:

Հայոց Հայրապետը՝ արժանաւորն տիր գահակալ Նորին Սրբութիւնը, Հայ ժողովուրդին ձայնն ու

աղաղակը մարմնաւորելով, պիտի ձայնէ սուրբ խորանէն կենդանարար Ս. Հոգիին, որպէսզի իջնէ Անթիլիասի կաթողիկոսանիստ Մայրավանք եւ «շարժէ» քառասուն տեսակէ աւելի բոյսերու եւ ծաղիկներու նիւթը պարունակող իւրը, եւ դարձնէ գայն Սուրբ Միւռնի, որով պիտի ծնին նոր մանուկներ ու սերունդներ, նոր գիւնուրագրեալ եկեղեցականներ, պիտի բարձրանան

վուրդին, որպէսզի նոր Միւռնով լուայ մեր վերքերը, ու մեզ իր ուսին առնելով՝ հասցնէ իր բարձրունքներուն, մեր ազատօրէն ու անկախ ապրելու իրաւունքը վերադարձնելով մեզի...:

Շունչս կը բռնեմ եւ աղօթքով կը նայիմ Ս. Կաթսային: Որքան կ'ուզեմ, որ այն յոյսերը, որոնք աղօթքի ծրարին մէջ դրուած եւ ինսամբով պահուած են այս կաթսային խորերը, Ս. Գերեզմանին դուռին հետ բացուին եւ Ս. Միւռնի օրհնութիւնը ստանան: Որքան կ'ուզեմ, այս նոր բոյրը, Ծննդեան կամ Յարութեան անտիսի պէս ամեն հայ օճախի դուռը գարնէ, մտնէ ու բնակի հոն՝ իր սրբութիւնն ու օրհնութիւնը ճրագի պէս վառելով ու լուսաւորելով: Որքան կ'ուզեմ, Ս. Միւռնի այս հզօր բոյրը, թափանցէ իւրաքանչիւր հայ անհատի եութեան ու թոքերուն մէջ, ու հաւաքէ մեզ Հայ Եկեղեցւոյ Սուրբ ամպիովանիին տակ, որպէսզի ոչ ոք զրկուի հաւատքի լոյսէն եւ ազգային պատկանելիութենէն: Որքան կ'ուզեմ տեսնել այդ պահը, որ այնպէս ինչպէս Քրիստոսի Յարութեան լոյսը մահուան խաւարը պատռեց եւ մահը խորակեց՝ նոր կեանքի բոյրը լեցնելով մեր աշխարհը, նոյնպէս անկա չբացնէ Հայրենիքը շրջապատող սեւ ամպերը...:

Ահա կը լսուի Ս. Միւռնի եռացող իւրին ձայնը, հաւատացեալներու աղօթքի կրակին վրայ: Ս. Միւռնի կաթսային կափարիչին հետ, մեր սիրտն ալ բաց՝ կը սպասէ Յուլիս մէկի պատմական ու խորհրդաւոր օրուան: Այո, պատրաստ ենք, անգամ մը եւս վկաներն ու նուիրեալները դառնալու Սրբալոյս Միւռնի յարութեան շնորհքին... «Բաց մեզ, Տէ՛ր, գորուն ողորմութեան, որ ողբալով կարդամք առ քեզ»:

«Գանձասար» ՀԱՅ ԵՊԻՍԿՈՊԱԿՈՍՈՒԹԵԱՆ Կողմէ շնորհակալութեամբ ստացաւ

«ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ»ը:

**ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ**

Ս. Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցին կարիքը ունի հետեւեալ պաշտօնեաներուն.

- Տնտես մայրիկի (շաբաթական դրութեամբ),
- Պահակի (ցերեկային):

Հետաքրքրուողները կրնան դիմել Եկեղեցւոյ քարտուղարութեան հեռաձայնելով հետեւեալ թիւին 2124268:


Ս. Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ Թաղականութիւն



## Երիտասարդական Ոսպնեակ

### ԱՆԿԱՏԱՐ ԻՂՁ

(Ազգ. Քարեն Եփփե ճեմարանի 75- Ամեակի Առիթով)



Յակոբ Տոքմեճեան

Մանկութիւնը իւրաքանչիւրիս կեանքին ամենէն երջանիկ, ամենէն գեղեցիկ ու անհոգ ժամանակահատուածն է: Մանկութեան հետ է կապուած մեր քաղցր յիշողութիւնները: Ան ամբողջ աշխարհ մըն է, ուր բոլորը բարի են եւ մաքուր, հետեւաբար այդ ժամանակահատուածին ոչինչ չի փոխարինուիր: Բոլորս կարօտով կը յիշենք մեր մանկութեան հետ կապուած որեւէ յուշ:

Կը յիշեմ մանկութեան տարիները, երբ ամեն առաւօտ մօրս ձեռքէն բռնած ոստոստելով կ'անցնէի Ազգ. Քարեն Եփփե ճեմարանի պողոտայէն ուղղուելով դէպի Ազգ. Սահակեան Մանկապարտեզ: Մեզ կ'ընկերակցէր փոքր եղբայրս, որ ըստ սովորութեան մի քանի քայլ ետեւ կը մնար մեզմէ եւ յամառօրէն կը հրաժարէր մօրս ձեռքը բռնելէ: Կը հասնէի Ազգ. Ք. Եփփե ճեմարանի հսկայական շէնքին առջեւ, կը ձգէի մօրս ձեռքը եւ արագօրէն կ'ուղղուէի դէպի երկաթեայ դարպասը, զիս կը դիմաւորէր դրան առջեւ կեցած հայրիկը, «բարի լոյս հայրիկ» ըսելով կը մտնէի ներս: Ինծի այնպէս կը թուէր, թէ հայրիկը ամեն առաւօտ զիս կը սպասէր: Պահ մը կանգ կ'առնէի եւ հրճուանքով կը դիտէի այդ կախարդական աշխարհը (խումբ մը աշակերտներ գնդակին տետէն կը վազէին, ուրիշ խմբակ մը բարձրաձայն կը վիճէր): Բոլորս ալ կայտառ էին եւ կեանքով լեցուն:



Այդ հսկայ շէնքը լոկ սովորական շէնք չէր ինծի համար: Ան նման էր մեծ մօրս պատմած հեքիաթներուն մէջ գտնուող հսկաներուն: Հոն ամեն ինչ հրապուրիչ էր: Կ'երագէի ըլլալ այդ հարիւրաւոր աշակերտներէն մէկը: Մինչ ես հրապուրուած կը դիտէի, մօրս ձայնը զիս ուշքի կը բերէր ըսելով.

– Տղա՛ս, աճապարէ՛, կ'ուշանանք:

Դպրոցէն վերադարձին մայրս կը խուսափէր միեւնոյն մայթէն քայլելէ, հետեւաբար կ'անցնէիք դիմացի մայթը: Բերկանքով կը դիտէի դարպասէն դուրս եկող աշակերտներու բազմութիւնը, որ նման էր ալեկոծ ծովու հսկայ ալիքին: Աշակերտներուն ճռուողիւնը կը լեցնէր ամբողջ տարածքը, իսկ հոծ բազմութիւնը արգելք կը հանդիսանար անցորդներուն:

Տարիներ անցան, անհամբեր էի, կը հաշուէի օրերը՝ երբ ես ալ բախտաւոր աշակերտներէն մէկը պիտի ըլլայի յաճախելով այդ հեքիաթային շէնքը, սակայն երկար սպասուած ժամը ուշացաւ, աւելին՝ բնաւ չէկաւ: Անոր փոխարինեց անգութ պատերազմը խլելով ինձմէ մանկութեան ամենէն թանկ իրօքը: Չկարողացայ միջնակարգի եւ երկրորդականի ուսումնաստանալ այդ սերունդներ կերտող խորհրդաւոր շէնքէն ներս: Այո, թե՛ Ազգ. Ք. Ե. Գ. ճեմարանի աշակերտ ըլլալու տիտղոսին արժանացայ միմիայն երկուքուկէս տարի, ինչպէս նաեւ որպէս առաջնակարգ աշակերտ ստացայ գնահատագրեր եւ մետալներ վարժարանի բեմահարթակին վրայ, սակայն շրջանաւարտի տիտղոսին չարժանացայ: Այդ հսկայական շէնքը չկարողացայ վայելել թէկուզ մէկ օր ես:

Եւ ահա եկաւ դաժան օրը, երբ շատ մը ընտանիքներու նման մենք եւս պիտի հեռանայինք մեր սիրելի ծննդավայրէն, ետին ձգելով հարազատներ, բարեկամներ, ընկերներ եւ քաղցր յուշեր: Հրաժեշտի պահը անբաղձալի եւ տհաճ պահերէն մէկն է: Հրաժեշտ տուի սիրելի ուսուցիչ-ուսուցչուհիներուն եւ բոլոր ընկեր-ընկերուհիներուն, լսելով անոնց ջերմ եւ յուսադրիչ բարեմաղթութիւնները: Բնաւ չեմ կրնար մոռնալ այդ պահը, երբ մեկուսիս նախօրեակին ուղղուեցայ այդ հեքիաթային շէնքին տարածքը: Մեծ կակիծով դիտեցի այդ հսկան, զոր երկար տարիներ եղած էր եւ կը շարունակէ մնալ հալէպահայութեան բաբախող սիրտը, եւ մեր ազգային գոյատեւման գլխաւոր խարիսխներէն մէկը: Այդ օր ան ամբողջութեամբ լուռ էր եւ ոչինչ ունէր ըսելիք: Չկար դրան առջեւ զիս սպասող հայրիկը, չկար աշակերտներուն ճռուողիւնը, որ կը լսուէր թաղ մը անդին: Ամբողջ տարածքը ամայի էր եւ աւելին՝ վտանգաւոր: Երկաթեայ դարպասը փակ էր: Չկրցայ ներս մտնել: Կարօտալի աչքերով հեռուէն դիտեցի:

Ափսո՛ս... հազար ափսո՛ս: Առաջին եւ վերջին գանգը չլսած արդէն իսկ պիտի բաժնուէի սիրելի վարժարանէս:

«Յաւերժ ապրէ՛, հայ՛ դպրոց, մեր սիրելի՛ վարժարան» արտասանելով հրաժեշտ տուի դպրոցիս:

Այդ օրէն անցած են վեց տարիներ: Ներկայիս Թորոնթոյի Համալսարանի Biomedical Science -ի 4-րդ կարգի առաջնակարգ աշակերտ եմ: Կարելի չէ համեմատել երկու շէնքերը, սակայն ինծի համար Ազգ. Ք. Ե. Գ. ճեմարանի հեքիաթային շէնքը կը մնայ անգուգական:

Մնաս միշտ կանգուն, մնաս միշտ խրոխտ, հայակերտ օճախ, հայ մտքի հսկայ՛ դարբնոց:

2021/2022 ուսումնական տարեշրջանի աւարտին կը շնորհաւորեմ 12-րդ կարգի «75-ամեակի Սերունդ»-ի բախտաւոր ճեմարանականները, մաղթելով բարձրագոյն նուաճումներ եւ բարի երթ:

Փա՛ռք քեզ, ճեմարան:

## Աշակերտական Անկիւն

### «ԹԱՐԱՏՏԻ ԱԼ-ՔԻՐԱԱ ԱԼ-ԱՐԱՊԻ» ՄՐՑՈՒՄԵՆ ՇԱՐԱԾ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆՍ



Աւօ Չիլվաքոշեան

Շէյխ Մուհամմետ Պըն Ռաշիտ ալ-Մաքթումի կազմակերպութեամբ եւ հովանաւորութեամբ, 2015-ին Տուպայի մէջ յայտարարուած է «Թահաւտի ալ-Քիրաա ալ-Արապի» անունով մրցում մը, որուն նպատակն է քաջալերել ընթերցումը: 2022-ի մրցումը հասած է իր 6-րդ փուլին:

Մրցումին կը մասնակցին արաբական եւ ոչ-արաբական աւելի քան 40 երկիրներէ, ինչպէս՝ ԱՄՆ, Չինաստան եւ այլն... աշակերտներ: Մրցումին մասնակցելու պայմանները հետեւեալներն են՝ իւրաքանչիւր մասնակից պէտք է ընթերցէ եւ ամփոփէ 50 արաբերէն այլազան գիրքեր՝ գրական, գիտական, քաղաքական եւ այլն...: Մասնակիցը առաջին պայմանը լրացնելէ ետք, ամփոփուած գիրքերը գրի կ'առնէ 5 տետրերու մէջ, որմէ ետք կը սկսի մրցիլ դպրոցի, նահանգի, երկրի եւ արաբական աշխարհի մակարդակներով:

2020-ին մրցումը տեղի չէ ունեցած պատճառով ժառանգորդութեամբ 2021-ին առջանց դրութեամբ տեղի ունեցած է: Մրցումը ծանօթացնելէ ետք կ'ուզեմ յիշել նաեւ որ ես, այս տարեշրջանին, առիթ ունեցայ մասնակցելու անոր, որովհետեւ Սուրիոյ մասնակցութեան առիթ տրուեցաւ առաջին անգամ ըլլալով:

Կարդացի 50 արաբերէն գիրքեր, կրճատեցի ու ներկայացուցի զանոնք բերանացի եւ գրաւոր: Դժբախտաբար չկրցայ այս մրցումին առաջնակարգերէն հանդիսանալ, սակայն այժմ կը պատրաստուիմ յաջորդ տարուան մրցումին: Ես չչափեցայ մրցանակը, սակայն ինքզինքս յաղթած կը համարեմ, որովհետեւ իբր առաջին հայ մասնակից անցայ բոլոր փուլերէն, կարճ ժամանակուան մէջ 50 գիրք կարդալով 50 աշխարհի յայտնաբերեցի եւ հպարտ եմ, որ կրցայ վարժարանիս՝ Ազգ. Միացեալ վարժարանի էջերուն մէջ նոր ու յիշատակելի տող մը արձանագրել:

Փափաքս է, որ հայերէն գիրքեր ալ ընթերցելու նման մրցումներ ըլլան:

Ազգ. Միացեալ Նախակրթարանի 2022 տարուան շրջանաւարտ Հայէպ



## ԹԵԼ ՊԱՆԻՐ...

Սկիզբ՝ էջ 7

պահելն ու յետոյ, առանց թելերը կտրելու, իրար վրայ փաթթելը: Բայց կ'ընէի:

Տաք պանիրին հոտը պարզապէս զգալի էր, ոչ միայն դաշտ ու հանդի հոտը իր մէջ պահած, այլ նաեւ ձմրան ցուրտ գիշերներուն, վառարանին քով կծկուած, թէյին հետ թել պանիրով փաթթոց մը ուտելուն երջանկութեան հոտը պահած:

Երբ վերջանար պանիրը ամբողջ, որ ընդհանրապէս միայն քսան քիւօ կ'ըլլար, մայրս մեր երկուքը դուրս կը դնէր խոհանոցէն, «Ելէ՛ք որ հաւքոտեմ-մաքրեմ» ըսելով:

Թել պանիրը պահելու յատուկ կարասներ ունէինք, ուր աղ-ջուրին մէջ ամբողջ տարին մնալով, կարծես աւելի կը համովար պանիրը:

Տակաւին կար կարկանդակին պատրաստութիւնը, կար թխուելու համար փուռը դրուած կարկանդակին բոյրը...

Յետոյ հայրս մեռաւ: Ընտանեկան այս աւանդութիւնը ինքնաբերաբար մոռցուեցաւ կարծես:

Այսօր երբ կը յիշեմ թել պանիր պատրաստելու մեր խանդավառութիւնը, ապա զայն վայելելու հաճոյքը, կ'ափսոսամ որ կորսնցուցինք զայն, որովհետեւ պատրաստ գնուածը ո՛չ նոյն համը ունի, ոչ ալ նոյն ապրումները կրնայ արթնցնել:

## ԵՍ ՏԻՐՈՋ...

Սկիզբ՝ էջ 7

Նաթանկագին բանը ի՞նչ է: Աստուածաշունչին համաձայն պիտի ըսենք, որ մարդուն կեանքին մէջ ամենաթանկարժէք բանը ժամանակն է. անոր համար ալ Ս. Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Օգտագործե՛ք ժամանակը, որովհետեւ այս օրերը չար են» (Եփ 5. 16), մէկ վայրկեանը կրնայ մարդուն ամբողջ կեանքը արժէ կամ անոր ամբողջ կեանքին հաւասարիլ, որովհետեւ մարդուս կեանքը վայրկեաններու հաւաքածոյ մըն է:

Երբ ժամացոյցին կը նայիս եւ կը տեսնես, որ երկվայրկեաններու սլաքը անդադար եւ արագ կը շարժի, դուն քեզի ըսէ, որ ընթացողը ո՛չ թէ երկվայրկեաններու սլաքն է, այլ՝ իմ կեանքն է. իրար կը յաջորդեն օրերը, ժամերը, վայրկեանները, եւ մեր կեանքը արագօրէն կ'անցնի, ինչպէս գրուած է. «Ձեր կեանքը մշուշին պէս է, կարճ ժամանակ մը կ'երեւի եւ ապա կ'աներեւութանայ» (Յկ 4. 14): Մարդ անհրաժեշտ է, որ գիտնայ ժամանակին արժէքը, եւ արթուն պահակի պէս հսկէ, որպէսզի որեւէ բան չկորսնցնէ իր ժամանակէն: Մարդուս կեանքը վայրկեաններու հաւաքածոյ մըն է եւ այդ կեանքին իւրաքանչիւր վայրկեանը իր արժէքը ունի. երակ'որ մարդ գիտնայ, թէ ինչպէ՛ս պէտք է օգտուի անկէ:

(Շար. 16)



Պրիսմակետ

ԹԵԼ ՊԱՆԻՐ



Մարյա Երամեան

Ամեն ճաշէ ետք, երբ մայրս մոռնար մեր տան մէջ սովորութիւն դարձած հաց-պանիրը, մեծ-հայրիկը ժպիտով կը դառնար մօրս ու կ'ըսէր.

–Այսօր բերան ոսկեջրել չունի՞նք:

Այնքան յաճախ լսած եմ այս խօսքը, որ ուշադրութենէս վրիպել եր միկէս վերջերս, երբ յուշերու տարափին տակ կրկին յիշեցի եւ ... շատ զարմացայ՝ «բերան ոսկեջրել»: Ուրեմն պանիրը ոսկիի արծեք ունեցած ըլլալու է մեր նախնիներուն համար:

Եւ արդարացիօրէն. որովհետեւ անկախ պանիրին մննդական արժեքէն, նաեւ ամբողջական մնունդ է: Եւ ինչո՞վ կրնային մնուիլ ձիւն-ձմեռին, այոջան ձիւնի տակ փակուած-բանտարկուած: Բնական չէ՞ որ պանիրը ոսկիի արծեք ստացած ըլլայ:

Եւ ուրեմն նոյնքան բնական է իմ ոչ-սովորական սերս պանիրին հանդէպ, պանիրի ԲՈՒՆՈՐ տեսակներուն հանդէպ:

–Յապա ի՞նչ ճաշ պատրաստեմ քեզի համար, – ըսաւ հօրեղբօրս ֆրանսուհի կինը, երբ իր սպասած չափով չէի գնահատած *սէնի-քիւֆ-թէն*, որ ի պատիւ ինծի պատրաստեր էր, բաւական այլ յոգնելով:



–Ամեն օր եթէ երեք տեսակ պանիր դնես սեղանին որպէս ճաշ, ՇԱՏ գոհ կը մնամ:

–Բայց դուն ալ ամենէն հոտած պանիրները կը հաւնիս, – կ'ըսէին զարմուհիներս, երբ ամէն օր նոր տեսակի պանիրները կը փորձէի:

«Յոտած» անշուշտ կը նշանակէր սուր համուհոտով, երկար ժամանակ պահ դրուած:

Յայաստան ալ նման պանիրներ կան, ինչպէս օրինակ Կիւմրիի նշանաւոր չէչիլը՝ թել պանիրը, որ հալէպեան թել պանիրին կը միացնէ ֆրանսական (արդեօ՞ք) կապոյտ-փորփոսած պանիրին յատկանիշերը:

Երբ թել պանիրին ժամանակը գար, հայրս մեծ խանդավառութեամբ կը սկսէր հետեւիլ վիճակին, գինին, տեսակին, ու երբ յարմար բան մը գտնէր, կ'ազդարարէր մօրս՝ «*Վաղը պանիրը պիտի բերեմ, գիտցած ըլլաս ...*»: Կը բերէր Սաաթիէն (գոց կամ ներսի շուկային միս-պանիրի թաղերը), թէ՛ Պապ ալ-Յատիտէն, չէ՛մ յիշեր:

Տունը թել պանիր պատրաստելը մեր ընտանեկան աւանդութիւններէն մէկն էր, որուն կը մասնակցէին բոլորս, այսինքն՝ հայրս, մայրս եւ ես:

Պանիրը տուն կու գար մեծ պարկով մը.

–Թթուած է, – կը հարցնէր մայրս:

–Զանի մը ժամէն կ'ըլլայ:

Պանիրը պէտք էր «թթուած» ըլլար, այսինքն ծակ-ծակ ու պատրաստ հալելու:

Մայրս կը սկսէր պատրաստութիւնները. կը հանէր միայն պանիրին վերապահուած պղինձէ խորունկ տապակը, կը պատրաստէր պաղ ջուրը, որուն մէջ պիտի դրուէր պանիրը շուրջ ըլլալէն ետք, կը պատրաստէր խորունկ ապակիէ ամանը, որուն մէջ պիտի պահուէր պանիրին ջուրը, որ յետոյ զատկական փոքրիկ կարկանդակներ շինելու համար օգտագործուէր ...

Եւ մինչեւ այս պատրաստութիւնները ամբողջանային, պանիրը պէտք եղածին չափ թթուած կ'ըլլար:

Տապակին մէջ քիչ մը ջուր, տապակը կրակին, իսկ մենք երեքս արագ-արագ կը սկսէինք պանիրը բարակ-բարակ շարդէի:

Չուրը երբ եռար, մայրս կը դնէր շարդուած պանիրէն այնքան, որ խորունկ տապակը լեցուէր. կը սպասէինք մինչեւ պանիրը հալէր. յետոյ մայրս հօրս կու տար մեծ գունդ մը, ինծի՝ փոքր գունդ մը, ինք կ'ամուէր միջակ գունդ մը եւ երեքս ալ տաք պանիրին վրայ փչելով-փչելով կը սկսէինք թել քաշել:

Յայրս ամենէն վարպետն էր այս գործին մէջ. երկու բթամատերով ծակ մը կը բանար տաք պանիրին գունդին մէջ, ապա ափերը կը հեռացնէր իրարմէ. տաք պանիրը այնպէ՛ս կը հալէր ու կ'երկարէր. հայրս գիտէր ե՞րբ իրար վրայ պիտի փաթթէր երկու ծայրերը եւ կրկին ափերը հեռացնելով քաշէր պանիրը ...

Մինչեւ որ ա՛լ պաղած, պանիրը դադրէր երկարելէ. այն ատեն հայրս շուրջ մը կը պատրաստէր եւ երկու ծայրերը իրարու ամրացնելով, կծիկը կը դնէր պաղ ջուրին մէջ:

Ինծի համար մեծ ուրախութիւն էր մասնակցիլ այս արարողութեան, թէն գիտէի որ շատ դժուար պիտի ըլլար տաք պանիրը ափերուս մէջ

Շար.՝ Էջ 6

ԵՍ ՏԻՐՈՋ ԻՆ՞Չ ԿՐՆԱՄ ՅԱՏՈՒՑԱՆԵԼ



Թարգմանեց՝ Լեւոն Վրդ. Եղիայեան

Դաւիթին ապրած անկեղծ եւ հարազատ ապաշխարութեան արդիւնքներէն են յիշեալ սաղմոսին հետեւեալ տողերը. «*Արդ, ես Տիրոջ ի՞նչ կրնամ հատուցանել, ինծի ըրած բոլոր բարիքներուն փոխարէն: Փրկութեան բաժակը պիտի առնեմ՝ երախտագիտութիւնս յայտնելու համար Տիրոջ*» (Սղ 116.12-13):

Դաւիթի փափաքն էր խօսիլ ժողովուրդին եւ վկայել անոնց Տիրոջ իրեն համար ըրած բարիքներուն մասին եւ թէ ինչպէ՛ս Աստուած ողորմեցաւ իրեն: Ան կ'ուզէր մարդոց ապաշխարութեան հրաւիրել եւ իր ցանկութիւնն էր, որ մարդիկ շտապէն ապաշխարելու նախքան յանկարծակի այս աշխարհէն հեռանալու ժամանակին վրայ հասնիլը:



Այսպէս է, որ մարդուս մէջ ուրիշներուն փրկութեան հանդէպ սուրբ նախանձախնդրութիւնն ու ջերմ փափաքը կը զարգանան, ու մարդ կը կրկնէ, որ բաւարար չէ միայն իմ ապաշխարութիւնը ու առ Աստուած դառնալը, այլեւ պէտք է, որ հազարաւորներ ինծի հետ քաշեմ դէպի Աստուած, որպէսզի արդարութիւնն ու Աստուծոյ սերը տարածուին: Եւ ուղղակի կամ անուղղակի կերպով այս ազդեցութիւնը կը հասնի բոլոր անոնց, որոնց գայթակղութեան պատճառ եղած կրնայի ըլլալ կամ այն սերունդներուն, որոնք պիտի կրէին ազդեցութիւնը այն գայթակղութիւններուն, որ ես պատճառած կրնայի ըլլալ:

Արդ մարդը կը զգայ, որ ինք կոչուած է մեծ գործ մը կատարելու, եւ թէ իրմէ կը պահանջուի սրբագրել այն՝ ինչ որ իր մեղքին պատճառով փճացուած էր եւ իրեն համար բարի վարձք ապահովել ինչպէս նաեւ աստուածահաճ գործեր կատարել: Անկկա ինքնիրեն կ'ըսէ, թէ անձամբ մեծապէս պարտական է Աստուծոյ, ուստի Տիրոջ ի՞նչ կրնայ հատուցանել բոլոր իրեն տուածներուն համար:

ՍՐԵՍՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՏՈՒԾ ԿԵԱՆՔ

Ապաշխարութեան կարեւորագոյն արդիւնքներէն մէկը պիտի ըլլայ մարդուն երկնային արքայութեան համար պատրաստ կեանք մը ապրիլը: Ուստի, ինչպէ՛ս պատրաստուի: Ինչպէս մարդ ապաշխարութեամբ կը պատրաստուի, նոյնպէս կը պատրաստուի հոգեւոր առաքինութիւններով եւ իր առջեւ կը դնէ հոգեւոր այն միջոցները, որոնցմով կրնայ երկինքի արքայութիւն մուտք գործել: Կը նայի, թէ ինչպէ՛ս կրնայ առաւել խորանալ Աստուածաշունչի ընթերցանութեան եւ անոր մասին խորհրդածութեան մէջ, ինչպէ՛ս սորվիլ եկեղեցւոյ շարականներն ու օրհներգութիւնները, եւ պատրաստ ըլլալ ինքզինք մարգելու, մինչեւ որ զգայ թէ Աստուծոյ սերը կ'ողողէ իր կեանքը եւ զգայ, որ Ս. Յոգիով կը լեցուի: Այս բոլորին կողքին ձեռքազատի գէշ սովորութիւններէ եւ փոխարէնը իր կեանքին մէջ երեւան գան առաքինութիւններն ու Ս. Յոգիին արդիւնքները (պտուղները):

Յաւատացեալ մարդէն շատ բաներ կը պահանջուի, որպէսզի ժառանգորդ դառնայ արքայութեան, ինչպէս Յիսուս ըսաւ. «*Անկկա կը կտրէ վրաս հաստատուած բոլոր այն ճիւղերը, որոնք պտուղ չեն տար, իսկ բոլոր անոնք, որոնք պտուղ կու տան՝ յօտելով կը մաքրէ, որպէսզի անելի պտղաբեր ըլլան*» (Յհ 15.2):

Ուստի, երանի՜ շուտով ոտքի կանգնիս եւ աշխատիս բարեգործութիւն ընել, որովհետեւ ժամանակը կ'անցնի՝ ու կը սուրայ՝ «*Արդ՝ իմ օրերը սուր-հանդակէն արագ են, փախան առանց բարութիւն տեսնելու*» (Եօք 9.25):

Արդ, եթէ ժամանակին չհասնիս, թերեւս առիթը կորսցնես: Աճապարէ՛ ողորմութիւն գործելուդ մէջ, եւ եթէ կարիքաւոր մը գտար՝ շտապէ՛ որ տաս անոր. եւ եթէ հիւանդի մը մասին լսեցիր, աճապարէ՛ որ օգնես անոր:

Յիշէ՛ որ ժամանակին ի՞նչ ըսաւ Քրիստոս, որ այսօր ալ սրտիդ դուռը թակելով կ'ըսէ. «*Որովհետեւ անօթի էի եւ զիս կերակրեցիք, ծարաւ էի եւ ջուր տուիք, օտարական էի եւ ընդունեցիք զիս, մերկ էի եւ հագցուցիք ինծի, հիւանդ էի եւ հոգ տարիք ինծի, բանտի մէջ էի եւ այցելեցիք ինծի*» (Մտ 25.35-36): Եւ երբ կը հարցնենք իրեն. «*Տէ՛ր, քեզի ե՞րբ անօթի տեսանք եւ կերակրեցիք, կամ ծարաւ տեսանք եւ ջուր տուիք: Քեզի ե՞րբ օտարական տեսանք եւ ընդունեցիք կամ մերկ՝ եւ հագցուցիք: Քեզի ե՞րբ հիւանդ կամ բանտի մէջ տեսանք եւ այցի եկանք քեզի*»: Թագաւորը կը պատասխանէ. «*Կ'ըսեմ ձեզի, որովհետեւ իմ այս փոքր եղբայրներէն մէկուն ըրիք, ինծի ըրած եղաք*» (Մտ 25.37-40):

ՕԳՏԱԳՈՐԾԵՅԷՔ ԺԱՄԱՆԱԿԸ, ՈՐՈՎՅԵՏԵՒ ԱՅՍ ՕՐԵՐԸ ԶԱՐ ԵՆ (Եփ 5.16)

Անձիդ հետ հաշուետուութեան նստե՛ եւ մտածե՛, թէ կեանքիդ մէջ ամէն- Շար.՝ Էջ 6

## ԱՅՆԹԱՊ՝ ՍԻՐՏԸ ԿԻԼԻԿԻՈՅ



Տոքթ. Սոքրայր Մանճեան

1915-ին, երեսուն հազար այնթապահայեր պարտադրաբար կը տեղահանուին իրենց հայրենի բնակարաններէն եւ թրքական պետութեան հրահանգով կ'ուղղուին դէպի Սուրիա:

1918-1920 թուականներուն կը վերականգնի Այնթապի հայութեան կեանքը, քանի որ Այնթապ մուտք կը գործէ ֆրանսական զինուորական բանակը: Կը վերաբացուին հայկական քուէժները: Այս տարիներուն, այնթապցիները կը զինուին՝ դիմակայելու համար հաւանական թրքական նոր յարձակումին:

Երբ ֆրանսացիք կը տեսնեն հայոց կազմակերպութիւններն ու խիզախութիւնը, Այնթապի հայոց հերոսամարտը կ'անուանեն Անատոլի Վերտօնը (տոքթ. Թորոս Թորանեան):

1921-ին, ֆրանսական զօրքը կը քաշուի Այնթապէն: Այս առիթէն օգտուելով թուրք խուժանները (պաշիպօզուքները) վայրագօրէն կը յարձակին հայկական թաղամասերուն վրայ:



Այնթապահայերը ցոյց կու տան կազմակերպութեան ինքնապաշտպանութիւն, որուն գլխաւոր կազմակերպիչներէն էր Տէր Ներսէս Քահանայ Թաւուքճեան:

Հայերը յաղթական դուրս կու գան, թուրքերը կ'ունենան ուրջ հազար կռուողի կորուստ, իսկ հայերը՝ հարիւր նահատակ:

Հայերը եօթը հարիւր յիսուն հոգիէ բաղկացած զօրախումբով կը շարունակեն մարտերը մինչեւ Մայիսի վերջը: Ապա Ֆրանսան եւ Թուրքիան անսպասելիօրէն Անգարայի մէջ կը կնքեն համաձայնագիր մը, ըստ որուն ֆրանսական զօրքը պիտի հեռանար Այնթապէն: Այս տիրապետչական համաձայնագիրը պիտի դնէր Կիլիկիոյ քաղաքներն ու գիւղերը նոր կոտորածներու վտանգին առջեւ:

Այնթապահայերու ինքնապաշտպանութիւնը կը շարունակուի մինչեւ Յուլիս ամսուն սկիզբը: Մարտերը աստիճանաբար կը սաստկանան: Այնթապցի հայերը ստիպուած կը գաղթեն իրենց հարազատ քաղաքէն դէպի Սուրիա, Լիբանան ու կը սփռուին աշխարհով մէկ:

Հայրենասէր այնթապցիներու ներդրումը մեծ էր Հայաստանի մէջ եւս: Սուրիական բանակի Չօրավար Արամ Գարամանուկեանի եւ տիկնոջ ներդրումով կը կառուցուի երկրորդական վարժարան մը Այնթապ անկիւնի մէջ:

Հետագային, Թուրքիա ամէն ջանք ի գործ կը դնէ աղաւաղելու Այնթապի դիմագիծը: Այնթապի անուին կ'աւելցնէ նաեւ Ղազի բառը:

Թուրք այնթապաբնակ մտաւորական՝ Մուրատ Ուչաներ, որ արեւմտահայերէն սորված է նահատակ Հրանդ Տիկնի անուան հիմնարկութեան հաշուոյն, Երեւան մեկնած է այնթապցի լուսանկարիչ Խորէն Նազարեթեանի ընտանիքին մասին նիւթ հաւաքագրելու: Ըստ իրեն, ներկայիս Այնթապի մէջ կ'ապրին շուրջ յիսուն հազար իսլամացած հայեր: Մուրատ Ուչաներ թարգմանած է երեք գիրքեր, որոնք տակաւին չեն հրատարակուած: Անոնք են՝ «Այնթապի Գոյամարտը», «Այնթապի Մէջ ՀՅԴ-ի Պատմութիւնը» եւ «Պատմութեան Այնթապի Մասին»:

Այս գիրքերուն միջոցով խօսիլն ու գրելը արդարութեան ու ճշմարտութեան յաղթանակներ էին գրողին համար:

Մուրատ Ուչաներ որոշած է այս տարի՝ 2022-ին, հրատարակել գիրք մը, որուն մէջ կը ներկայացնէ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ բնակող այնթապահայերու պատմութիւնը:

Դամասկոսի համալսարանէն ներս ուսանած տարիներու ծանօթացայ Գրիգոր եւ Արթին Լոշխաճեան եղբայրներուն: Գրիգորը դարձաւ ելեկտրականութեան երկրաչափ, իսկ Արթինը՝ բժիշկ: Անոնց ծնողները՝ Գեորգ Լոշխաճեան եւ Երանուհի Պապոյեան, գերդաստանի անդամներուն հետ Այնթապէն հասած էին Սուրիոյ Տարաա նահանգի Իզրաա քաղաք, ուր գործած ու դարձած էին հողատերեր:

Երբ անոնց գաւակները կը մեծնան, կ'որոշեն վերջնականապէս հաստատուիլ Դամասկոս, ուր բարձրագոյն ուսում կը ստանան: Երիտասարդներուն հօրեղբայրը՝ Աւետիսը, յիսունական թուականին կը հաստատուի Դամասկոս եւ կը դառնայ նոր բացուած Ազգ. Չաւարեան վարժարանի հոգաբարձու, ինչպէս նաեւ ՀՅ Դաշնակցութեան նուիրեալ գործիչ:

Լոշխաճեան եղբայրները իրենց բարի վարքով դարձան իմ սրտամօտ ու մնայուն բարեկամները: Տոքթ. Արթին իր բժշկական աստիճանական գիտական աշխատանքը ձեռնարկ Է Հայոց անմահ նահատակներուն: Իսկ երկրաչափ Գրիգորը իր մասնագիտութեամբ գործուն անդամ եղած է Դամասկոսի Հայոց Թեմի Թարգմանչաց նորակառոյց վարժարանի շինարարական յանձնախումբին եւ իր լաւագոյն ներդրումը բերած անոր:

Դիմատետրիս վրայ կը կարդամ Լաթաքիոյ հոգեւոր հովիւ Տէր Վազգէն Քահանայ Թեոփիլեանի հայրենակից Տէր Դեւոնդ Քահանայ Լոշխաճեանի գրառած «Այնթապի Զայլերգ» քերթուածը:


### ԿՍՄԻԹ

## ԵՐԿՈՒ ՏՈՂ ԳՐԵԼ ՉԻ ԳԻՏԵՐ

Փշակն

Իւրաքանչիւր ձեռնարկէ ետք ընդվզում մը կը պատէ հոգիդ, երբ կը տեսնես ձեռնարկին լրջութիւնը, սակայն յաճախ ականատեսը կը դառնաս բացման խօսքը ընթերցողներու անլրջութեան:

Անլրջութիւն ոչ թէ ձեռնարկին նկատմամբ, սխալ չհասկնաք: Բեմին վրայ ամէն բան կատարեալ իսկ ըլլայ, երեւելի կը դառնայ որ բացման խօսքը ընթերցողը գրել տուած է իր խօսքը, ինք պարզապէս դերասանութիւն կ'ընէ բեմին վրայ՝ համոզելու ներկաները թէ ի՞ր խօսքը կ'արտասանէ: Սակայն երբեմն այնքան կմկմալով ու անտեղի շեշտերով կը կարդայ, որ ինքզինք կը մատնէ:



Հերիք է ալ, համը փախցնել սկսաք, տղա՛ք: Գոնէ գրուած խօսքը սահուն կարդալ սորվեցէ՛ք նախքան բեմահարթակ յայտնուիլը:

Սա գրիչը բռնեցէ՛ք, երկու միտք անկեղծօրէն արտայայտեցէ՛ք, լմացաւ գնաց: Ե՛րբ պիտի հասկնաք, որ բեմը սուրբ է: Եթէ ըսելիք չունիս, կամ բան պիտի չաւելցնես հանդիսատեսին իմացածին վրայ, բեմ ելլելու չես, եղբայ՛ր: Բեմը ցուցադրութեան վայր չէ, որ գարդարուիս, ելլես կայնիս, ժպտիս, ողջունես ներկաները, բայց բան չըսես հանդիսատեսին: Բեմը միտք է, նոր խօսք է, փորձառութիւն է, ուղղութիւն տուող հարթակ է:

Եւ այս անլրջութիւնը միայն բեմերու վրայ չկարծեք...:

Դպրոցէն ներս շարադրութեան պարտականութիւն կը տրուի, աշակերտն ու իր ծնողքը կը թակեն այս ու այն ուսուցիչին կամ այլ աշխատատեղի աշակերտի մը դուռը, կը խնդրեն սանկ լաւ, ազդեցիկ, արցունքը աչքերէն դուրս բերող, յուզիչ շարադրութիւն մը գրել: Մինչդեռ իրենց պարզ ու յստակ գրիչին վստահող աշակերտներ կամ բեմավարներ շատ անելի մեծ ընդունելութիւն կը գտնեն:

Մեր գաւակները կը վարժեցնեն ծնունդէն: Չենք մղեր որ մտածեն, արտայայտուիլ սորվին, գրել սորվին: Չենք մտածեր որ իրենց գրածը շատ անելի հարազատ պիտի հնչէ, քան ամէն տարի կրկնուող մըտքերն ու հմետորական խօսքերը, որոնք կը գրուին այլոց կողմէ ու երբեմն առնչութիւն իսկ չեն ունենար ձեռնարկի եութեան հետ:

Թոյլ տուէ՛ք, որ մեր երիտասարդները արտայայտուիլ սորվին, գրել սորվին, մտածել սորվին, որպէսզի յետոյ երկու տող անսխալ գրող երիտասարդներ մտնի լոյսով չփնտռենք, միտքեր ընդօրինակող իրապարակագիրներու, գաղափարներ կրկնող բանախօսման ծնունդ չտանք:

Մղեցէ՛ք մեր երիտասարդները գրելու, ազատ արտայայտուելու եւ իրենց ոճը ձեւաւորելու: Ամուլութեան մի՛ մատնեք անոնց միտքն ու գրիչը:

Լոշխաճեան ընտանիքին անունը գիս կը յիշեցնէ վերոյիշեալ պատմութիւնը: «Այնթապի Զայլերգ»-ին հեղինակն է այնթապցի Յարութիւն Աղայեան, իսկ երաժշտութեան մշակման հեղինակը հալեպահայ ուսուցիչ եւ տնօրէն Լեւոն Թ. Լեւոնեան:

Ես՝ Մուսա Լեւոնի գաւակ, կը միանամ հերոս այնթապցիներուն ու կը կրկնեմ իրենց քայլերգը, անելի ճիշդ՝ քաջերու երգը.

**Հեռու կեցէ՛ք, դու՛ք՝ վախկոտներ  
Մենք նոր սերունդ, նոր Հայկեան,  
Մկրտուած ենք հայ արիւնով  
Դիւցազներուն, որոնք ինկան:**

**Մեր ջանքերով վաղն Այնթապին,  
Ամպերը գորշ կ'անհետին,  
Չի երկինքին ազատ արեւը,  
Փոթորիկէն վերջ կը ծագին:**

**Մենք համոզուած ենք, գիտակի՛ց,  
Թէ կռիւով է ազատութիւն,  
Յափշտակել պէտք է նաեւ,  
Մեր ազգային փրկութիւն:**

**Ա՛յն հայրենիք, դո՛ւ Կիլիկիա,  
Սրբէ՛ արցունքն ալ յետին,  
Չի քո սիրոյն տառապանքին,  
Ապրիլ գիտցաւ այնթապցին:**

Այս գրութիւնս, փոխան աղօթքի ու խունկի, թող ըլլայ ոգեկոչում Գրիգոր եւ Արթին Լոշխաճեաններու անմար յիշատակին եւ համայն աշխարհի այնթապցիներուն, որոնք վասն հայրենեաց պայքարիլ գիտնալով ապրեցան:



## Հարձակոյթ

### ԱՐԹՈՒՐ ՓԱՅՏԵԱՆ. «ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼԵՉՈՒԻ, ԶԱՅԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԵՐ ՄՇԱԿՈՅԹԻ ԴԱՅՊԱՆՈՒՄՆ ՈՒ ՏԱՐԱԾՈՒՄՆ ԵՆ ՆՈՐ ՄԵՐՆԴԻՆ ՄԷՁ»

Համազգային Հայ Կրթական Եւ Մշակութային Միութիւնը ունի իր աշխարհատարած ցանցը, որուն վրայ վերջին տարիներուն աւելցաւ Մոսկուայի գրասենեակը: Թէեւ նորաստեղծ, սակայն աշխուժութեամբ ուշադրութիւն գրաւող այս գրասենեակի տնօրէնն է Արթուր Փայտեանը, որ քանի մը շաբաթ առաջ երեւան կը գտնուէր, մասնակցելու համար Համազգայինի Գատգամաւորական Ժողովին: Առիթը պատեհ էր աւելի մօտէն ծանօթանալու Մոսկուայի հայ գաղութի դժուարութիւններուն եւ այս գրասենեակի գործունէութեան:

**«Գանձասար»-Մոսկուայի գրասենեակը նորագոյնն է «Համազգային»-ի գրասենեակներու շարքին: Երբ սկսած է այս գրասենեակի գործունէութիւնը:**

**Արթուր Փայտեան.** - Մոսկուայի գրասենեակը իրօք նորագոյնն է Համազգայինի գրասենեակների շարքին մէջ: 2021 թուականի Մայիսին մենք դիմել ենք Համազգայինի Երեւանի գրասենեակին, այնուհետեւ Համազգայինի Կեդրոնական վարչութեանը եւ առաջարկել ենք որ Ռուսաստանի Դաշնութիւնում, մասնաւորապէս Մոսկուայում ստեղծել Համազգայինի կառոյց: Ի ուրախութիւն մեզ, արձագանքը ստացել ենք անմիջապէս եւ Համազգայինի Կ. Վարչութեան այդ ժամանակուայ ատենապետ ընկ. Մկրտիչ Մկրտիչեանը եւ Երեւանից Կ. Վարչութեան անդամ ընկ. Սպարտակ Ղարաբաղցեանը եկել են Մոսկուա եւ Մայիս 2021-ին, մի խումբ նուիրեալների մասնակցութեամբ, ստեղծուել է Համազգայինի ժամանակաւոր վարչութիւն, որը վեց ամսուայ ընթացքում պէտք է ստեղծէր կառոյց, հաւաքէր նուիրեալների ու նրանից յետոյ մեր աշխատանքները շարունակուէին: Այդ վեց ամսուայ ընթացքում մենք կարողացել ենք ընկերներին համախմբել եւ Նոյեմբերին, եւս մի անգամ, մեր ընկերները եկել են Մոսկուա եւ ընտրուել է Համազգայինի Ռուսաստանի Վարչութիւն: Այդ այցելութեան ընթացքում մեր ընկերների հետ գնացել ենք Սանկտ Փետրսպուրկ, որտեղ եւս ստեղծել ենք կառոյց: Փաստօրէն այսօր Ռուսաստանի Դաշնութիւնում գործում են Համազգային Հայ Կրթական Եւ Մշակութային Միութեան Մոսկուայի եւ Ս. Փետրսպուրկի կառոյցները:

**«Գ.»- Գիտե՞նք, որ երկու միջինն է աւելի հայութիւն կայ այստեղ եւ այսպիսով Ռուսաստանը մեր մեծագոյն գաղութն է: Իւրաքանչիւր երկիր եւ հայկական գաղութունին իրենց իւրայատկութիւնները: Այս իմաստով ինչպէ՞ս կը բնութագրէք Մոսկուայի (եւ Ռուսաստանի) հայ գաղութը:**

**Ա.Փ.** - Այո, ճիշդ էք նկատում: Ռուսաստանում երկու միլիոնից աւելի հայ է ապրում եւ գրեթէ հիմնականում ռուսական հայ գաղութը ունի իր իւրայատկութիւնը եւ խիստ տարբերում է այլ գաղութներից: Եթէ այլ երկրներում գաղութները ձեւաւորուել են Յեղասպանութիւնից յետոյ մազա-

պուրծ այնտեղ հասած մեր հայրենակիցներից, ստեղծուել են տարբեր կառոյցներ (կրթական, մշակութային, Հայ Դատի գրասենեակներ եւ այլն), ապա Ռուսաստանի Դաշնութեան հետ մեր հայրենակիցները մշտապէս կապեր ունեցել են: Սովետական Միութեան փլուզումից յետոյ մեր շատ ու շատ հայրենակիցներ արտագաղթել են Ռուսաստան:

25 տարի է ապրում եմ Մոսկուայում եւ այդ տարիներն շփուելով մեր հայրենակիցներին հետ ու տեսնելով, թէ ռուսական սփիւռքը ի՞նչ խնդիրների ու դժուարութիւնների հետ է առնչուում այդ տարիներին, եկել եմ այն եզրայանգման, որ մեր խնդիրները լեզուի, հայի ինքնութեան եւ մեր մշակոյթի պահպանումն ու տարածումն են նոր սերնդին մէջ: Տեղափոխուելով Ռուսաստանի Դաշնութիւն շատ ու շատ ընտանիքներ ոչ միայն հնարաւորութիւն չունեն իրենց երեխաներին հայկական վարժարաններում ուսուցանելու, այլեւ որոշ դէպքերում՝ ընտանիքներում դադարել են խօսել հայերէն: Մտածելով, որ իրենց երեխաները յաճախելու են ռուսական ԲՈՒՀ-եր, ապրել ու գոյատեւելու են այստեղ, մեր լեզուն մղուել է երկրորդ հարթակ: Այս իրականութեան առնչուելով նկատել ենք, որ նոյնիսկ 40000-50000 հայ ապրող քաղաքներում չկան հայկական կրթական կամ համայնքային կառոյցներ: Ինչի՞ համար: Այդ առանձնայատկութիւնների շարքում պէտք է յստակօրէն ընդգծել, որ եթէ այլ երկրներում կան կրթական ամէնօրեայ հաստատութիւններ, Ռուսաստանում դրանք չկան: Երեխաները իրենց առօրեայում հիմնականում շփուում են ռուսական միջավայրի հետ, ռուսերենով: Հայերէնը պահպանելու լուրջ խնդիր է յառաջացել: Այս իրականութիւնը ըմբռնելով, մենք առաջարկեցինք Համազգայինի Կ. Վարչութեան Ռուսաստանում ստեղծել Համազգային Հայ Կրթական Եւ Մշակութային Միութիւն, որովհետեւ Համազգայինը իր մէկ դարուց աւելի գործունէութեան ընթացքում մշտապէս կրթութիւնը եւ մշակոյթը առաջնահերթութիւն է համարել ու կարողացել է դրսում Սփիւռքում հային հայ պահել ու նրան պահել հայուն վայել լեզուամտածողութեամբ: Նեռարելով գաւառը տարբեր միաւորների մէջ, կարողացել է նրանց մէջ պահպանել մեր ազգային հպարտ կերտուածքի, լեզուական, պատմական եւ մշակութային ժառանգութիւնը պահպանելու գիտակցութիւնը, որն էլ անհրաժեշտ է, որպէսզի Սփիւռքում ապրելով՝ մեր սերունդները չմոռանան իրենց պատկանելիութիւնը:

Ռուսաստանում եւս մի խնդիր կայ, որը պէտք է նկատի առնել. դա կրօնի նմանութիւնն է: Ռուսները եւս քրիստոնէայ ազգ են եւ այստեղ խառն ամուսնութիւնները բաւական շատ են: Դա եւս ռուսական մշակոյթի ազդեցութեան տակ ընկնելու

կարելի ազդակ է: Հետեւաբար, այս առանձնայատկութիւնները հաշուի առնելով արդէն անյետաձգելի էր դարձել Համազգայինի գործունէութեան ծաւալումը այստեղ: Միայն վերջերս ենք սկսել տարբեր տիպի հայկական կրթօճախների, միօրեայ դպրոցների, տարբեր համոյթների եւ կառոյցների ստեղծումը, որոնք միտում են այս խնդիրների լուծմանը:

**«Գ.»-Վերի հարցումը շարունակեմ. Այս պայմաններում մէջ ի՞նչ առաջնահերթութիւններ դրած էք ձեր գրասենեակին համար եւ հիմնական ի՞նչ միջոցներու կը դիմէք զանոնք իրագործելու համար: Այլ կազմակերպութիւններու եւ կառոյցներու հետ կը գործակցի՞ք:**

**Ա.Փ.** - Մենք, ի հարկէ, համագործակցում ենք տարբեր կառոյցների հետ: Նկատի ունեմ թէ՛ ՀՀ դեսպանութիւնը, թէ՛ Հայց. Առաքելական Եկեղեցին, Նոր Նախիջեւանի Թեմը, Ռուսահայերի Միութիւնը, տարբեր մշակութային միութիւններ, որովհետեւ ըստ Եութեան նոյն գործն ենք անում: Հայապահպանութիւնը՝ միայն այս ոլորտով մտահոգ եւ զբաղող տարբեր կառոյցների հետ գործակցելով կարող է հաս-



նել յաջողութեան: Տարբեր առիթներով միջոցառումներ ենք կազմակերպել: Սկսենք նրանից, որ անցեալ տարի ընկերների այցի ժամանակ անգամ մենք սկսեցինք գրական ակումբը եւ կարողացանք իրականացնել տարաբնոյթ գրքերի շնորհանդէսներ, մեր մշակութային ժառանգութիւնը ներկայացնող միջոցառումներ: Աւելի յստակ ու ճշգրիտ կարող եմ ասել, որ ՀՀ դեսպանատան մշակութային կեդրոնում անցեալ տարի կարողացանք 5-6 մշակութային ձեռնարկ իրականացնել, որոնցմէ երեքը տարբեր գրքերի շնորհանդէսներ էին: Այդ գրքերից մէկը Համազգայինի Երեւանի գրասենեակի կողմից իրատարակութեամբ «Հնչող Ձայներ»-ն էր: Դա տեղի ունեցաւ անցեալ Նոյեմբերին, Կ. Վարչութեան ընկերների այցելութեան ժամանակ, Ս. Փետրսպուրկում, նորաստեղծ կառոյցի հետ համատեղ աշխատանքով: Եռօրեայ այցելութեան ժամանակ կարողացանք յաւուր պատշաճի ներկայացնել վերջին պատեմագրում ամսահացած 11 երիտասարդ ստեղծագործողներին գործերը: Կազմակերպած ենք նաեւ Վաչագան Մանուկեանի նուիրում «Ազգային Հերոսը» եւ Գայիանէ Փայտեանի «Զոյ» եւ «Ծալլուած Ստուեր» գրքերու շնորհանդէսները: Մեր գործունէութեան հիմքում դրել ենք այնպիսի ձեռնարկներ, որոնք իւրայատուկ են չկրկնուող լինեն: Օրինակ. մեր ընկերուհիներ Բալիկ Զալմէրեանի եւ Նունէ Սարգսեանի հետ կարողացանք եկեղեցու պատերից դուրս առաջին անգամ ըլլալով ներկայացնել մեր շա-

րականները: Մենք փորձեցինք մեր այդ հրաշալի շարականները հրամցնել ոչ միայն հայ, այլեւ օտար արուեստասէր հասարակութեան: Եկեղեցու կամարներէն դուրս, Մոսկուայի Ազգութիւնների Տան կազմակերպուած այդ երեկոյին մասնակցում էին ոչ միայն մեր երգիչները, այլեւ հրաշալի մի խումբ՝ «Ararad band»-ը: Համատեղ այս համերգը մեծ արձագանք ունեցաւ եւ բոլորի կողմից ընդունուեց: Այնուհետեւ, նոյն տրամաբանութեամբ, մեր սիրելի երգչուհիների շանքերով Վեթենիսայի հայկական տաղաւարում ներկայացրեցինք հայկական օրորոցայինները: Սա եւս աննախադէպ էր ռուսահայ գաղութին համար: Հայ մշակոյթի այդ սքանչելի նմուշները յաջողեցինք յաւուր պատշաճի ներկայացնել հայ եւ ռուս հասարակութեան եւ արժանացանք անոնց շքան գնահատանքին:

Փորձում ենք նաեւ համագործակցել այլ հայկական միօրեայ (շաբաթօրեայ եւ կիրակօրեայ) դպրոցների հետ: Ու քանի որ Ռուսաստանի ոչ մի կառոյց (այդ իմաստով՝ թէ՛ դեսպանատունը, թէ՛ Հայերի Միութիւնը) ճշգրիտ պատկերացում չունի թէ քանի՞ հայկական դպրոց կայ Ռուսաստանի տարածքում, մենք փորձեցինք այդ գործը վերցնել մեր վրայ եւ հնարաւորինս ճշդել ու տեղեկութիւններ հաւաքել ու գործունէութեան հարթակ ստեղծել: Դրա առաջին արդիւնքը անցած տարուան Մայիսի վերջին նոյն Վեթենիսայի հայկական տաղաւարում կազմակերպուած «Հայաստան Աւելի» խորագրով փառատօնն էր, որտեղ ներկայացուած էին մօտ 15 միօրեայ դպրոցների աշակերտներ: Մեր երեխաները հայերէն էին սսմունքում ու տարբեր անուանակարգերով մրցանակներ ստացան: Դա եւս հրաշալի արձագանք ունեցաւ: Մենք փորձեցինք նաեւ այդ դպրոցների պատասխանատուներին ներկայացնել գործակցութեան ձեւաչափի մեր տեսլականը, մեր ծրագրերը եւ նոյնպէս հրաշալի արձագանք ստացանք:

Մենք նաեւ յաջողեցանք կազմակերպել ուսուցիչների հաւաք, որին առկայ եւ հեռակայ կարգով մասնակցող ուսուցիչներին հետ ընկերակցելու մեր առաջ ծառայած դժուարութիւնների մասին: Այդ համագործակցութիւնը պէտք է շարունակուի, որպէսզի ստեղծենք մեծ հարթակ, ուր Ռուսաստանում գործող հայոց լեզուի ուսուցիչները կարողանան շփուել եւ ուսուցման հարցերը քննարկել: Ցարդ ունենք whatsapp-ի խումբ, ուր այլազան խնդիրներ կ'արծարծուեն եւ մեր երեխաներին հայերէն ուսուցանելու աւելի ճկուն ու այժմեական միջոցներն են քննարկում:

Մեր գործակցութեան դաշտը ընդգրկում է նաեւ մեր համար կարեւորագոյն ուղղութիւններից մէկը՝ մեր եկեղեցին: Մեր ընկերների այցելութեան ընթացքին հանդիպում կազմակերպեցինք Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Թեմի Առաջնորդ Եզրաս Արք. Ներսիսեանի հետ, որի ընթացքում քննարկուեցին համագործակցութեան եղանակները, որպէսզի կարողանանք լուծել մեր հարցերը: Նշեմ, որ թէ՛ այդ օրերին, թէ՛ ատկէ վերջ, Սրբազանը մշտապէս աջակցել է մեր ծրագրերին:

(Շար. 1)  
**Հարցազրոյցը վարեց Սարի Մերտիսեան**



## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

**ԽՈՅ**  
Ամրան արձակուրդը հաճելի պտոյտներով և հանդիպումներով պիտի անցնենք: Օգտուեցե՛ք ազատ ժամերէն ու ծրագրեցե՛ք վերամուտի ձեր ընկերները:
- 

**ՑՈՒԼ**  
Տնտեսական դժուարութիւնները թող չընկճեն ձեզ: Մտածեցե՛ք եկամտաբեր աղբիւրներու մասին ու ձեր վիճակը պիտի բարելաւուի:
- 

**ԵՐԿՈՒՐԵԱԿ**  
Երկրի կենցաղային ծանր պայմանները երբեմն կ'ընկճէ ձեզ: Հաւաքական աշխատանքներու մասնակցեցե՛ք եւ փորձեցե՛ք հարցերը իրենց տարողութենէն աւելի չմեծցնել:
- 

**ԽԵՑՁԵՏԻՆ**  
Կուրօրէն մի՛ վստահիք մարդոց: Փորձեցե՛ք քանի մը անգամ, ապա անոց վստահելիութեան մակարդակը ճշդեցե՛ք:
- 

**ԱՈՒԻՇ**  
Նորարար միտքեր ունիք, որոնց շնորհիւ պիտի յաջողիք նոր գործի ընդունուիլ ու լաւապէս գնահատուիլ:
- 

**ԿՈՅՍ**  
Ձեր յաջողութիւններուն մասին յաճախակիօրէն մի՛ խօսիք, զգոյշ եղե՛ք նախանձ մարդոցմէ ու լուռ աշխատեցե՛ք:
- 

**ԿԵՒՈՔ**  
Բարձր տրամադրութեամբ կ'աշխատիք, որուն համար ալ սիրուած անձնաւորութիւն էք ձեր միջավայրին մէջ: Օգտուեցե՛ք ձեր այս տուեալներէն ու հասութեամբ աշխատանքի ձեռնարկեցե՛ք:
- 

**ԿԱՐԻՃ**  
Բազմակողմանի կարողութիւններով օժտուած էք, որուն համար ալ գործունեայ էք ու ձեր ներկայութիւնը միշտ օգտակար է ընկերութեան մէջ:
- 

**ԱՂԵՂԱՊՐ**  
Հեռաւոր բարեկամէ մը լաւ լուր մը պիտի երջանկացնէ ձեզ ու ճամբորդութեան ծրագիր մը յաջողութեամբ պիտի պսակուի:
- 

**ԱՅԾԵՂՁԻՐ**  
Դուք յարաբերական գետնի վրայ բաւական ճկուն էք, բարդ մարդոց հետ անգամ հանգիստ կ'աշխատիք: Այս իսկ պատճառով ձեզի պատասխանատու պաշտօն մը պիտի վստահուի:
- 

**ՋՐՈՍ**  
Ժամանակ յատկացուցե՛ք ձեր ընտանիքին ու զաւակներուն: Աշխատանքը ամէն բան չէ կեանքի մէջ, եականը երջանիկ ընտանիք ունենալն է:
- 

**ՁՈՎ**  
Ստեղծագործ միտք ունիք, որուն համար ալ ձեզի պիտի առաջարկուի նոր ընկերութեան մը մէջ եգակի պաշտօն մը: Մի՛ տատամսիք, կրնաք յաջողիլ:



Նուշիկ Սողոյեան-Առաքելեան

## ԵԿԷՔ ՊԱՏՐԱՍԵՆՔ ԾԻՐԱՆԻ ՉԻՐ



Ծիրանը հայկական պտուղ մըն է, որ ամբողջ աշխարհին կողմէ սիրուած է: Ան ունի հիւթեղ, նուրբ եւ քնքուշ համ: Ծիրանի չիրը օժտուած է բազմաթիւ օգտակար յատկութիւններով: Բժիշկները կը թելադրեն երեխաներուն եւ յղի կանանց, որ իրենց սննդակարգին անպայման աւելցնեն ծիրանը:

**Նախ Ծանօթանալը Ծիրանի Յատկութիւններուն**  
-Ծիրանը կը մաքրէ մարսողական համակարգը: Ճաշելէ առաջ մէկ-երկու ծիրան կերե՛ք ձեր մարսողութիւնը խթանելու համար:  
-Ծիրանը կը պայքարի սակաւարիւնութեան դէմ: Այս համեղ պտուղը երկաթի հարուստ աղբիւր է, ինչ որ կ'օգնէ պայքարելու սակաւարիւնութեան դէմ:  
-Ծիրանը լուծողական է: Փորկապութեան պարագային,

թարմ կամ չոր ծիրան կերե՛ք, եւ շատ արագ կը լուծուի ձեր պարտաւարտ հարցը:  
-Ծիրանը մորթը առողջ կը պահէ: Ծնորիւ իր պարունակած կենսասիւթերուն եւ հանքայիններուն ծիրանի յաճախակի օգտագործումը մորթը կը պահէ առողջ, ողորկ եւ փայլուն:  
-Ծիրանը կ'օգնէ յղի կիներուն: Թելադրելի է, որ յղի կիները եւ կաթ տուող մայրերը տուրմն ու քաղցրաւենիները փոխարինեն ծիրանով, քանի որ անիկա աւելի սննդարար է եւ առողջապահական: Սակայն պէտք չէ չարաշահել զայն:  
-Ծիրանը կը կարգաւորէ սրտին աշխատանքը: Դարձեալ շնորհիւ իր հարուստ բաղադրիչներուն՝ օրական քանի մը թարմ կամ չոր ծիրան ուտելը կը նպաստէ սրտանօթային համակարգի լաւ գործունեութեան:  
-Ծիրանը կը պահպանէ տեսողութիւնը: Ա. կենսասիւթով հարուստ ծիրանը կը պահպանէ տեսողութիւնը եւ կը պաշտպանէ քթաթարաքթէ եւ այլ հիւանդութիւններէ:  
-Ծիրանը կը կանոնաւորէ արեան գերձնշումը: Ծիրանը կը պարունակէ 3 անգամ աւելի փոթասիւմ եւ շատ աւելի քիչ աղ, քան՝ պանանը եւ կ'օգնէ արեան ճնշման կայունացման:  
-Ծիրանը կ'ամրացնէ մկանային հիւսուածքները: Այս զարմանահրաշ պտուղը յանձնարարելի է յատկապէս մարզիկներուն եւ մարզասրահ յաճախողներուն, քանի որ երկար մարզումներէ ետք, մկանային հիւսուածքներուն մէջ յառաջացուցած միջոցառումները սնուցման կարիք ունին:  
-Ծիրանը կ'օգնէ արեան արագ լերդացման: Ծիրանին մէջ պարունակուող ԶԱ. կենսասիւթը կ'օգնէ բաց վնասուածքներու կամ առատ արիւնահոսութեան պարագային արեան արագ լերդացման:



### ԽՈՅԱԳԻՐ

## ՍՍԲՈՒԿՈՎ ՃԱՇԱՏԵՍԱԿ

- Բաղադրութիւն**  
2 սմբուկ  
1 սուրճի գաւաթ  
ձիթաիւղ  
Քիչ մը օրիկանօ  
Աղ  
Սեւ պղպեղ  
1 գլուխ սոխ  
1 հատ ստեպլին  
1/2 տրոցակ ազատքեղ  
225 կրամ մոզարելլա պանիր  
1/2 գաւաթ բրինձ  
1 հատ լոլիկ  
1 գաւաթ ջուր



**Պատրաստութիւն**  
Սմբուկները երկար-երկար շերտերու վերածել, աղել եւ 10 վայրկեան եփել փուռին մէջ:  
Սոխը խորանարդածէ կտրտել եւ ձիթաիւղով տապակել: Աւելցնել քերթուած ստեպլինը եւ ձգել 2 վայրկեան: Աւելցնել խորանարդած մանրուած լոլիկը եւ 10 վայրկեան եփել: Աւելցնել բրինձը, ջուրը եւ կրակին վրայ լաւ մը խառնել (15 վայրկեան): Կրակէն վար առնելէ ետք, աւելցնել մանրուած ազատքեղը, մոզարելլա պանիրը, սեւ պղպեղը, օրիկանօն եւ աղը: Իւրաքանչիւր շերտուած սմբուկի 1 ճաշի դգալ այս խառնուրդէն աւելցնել, փաթթել եւ ցպիկով ամրացնել:  
Փուռի ափսեին մէջ մոմուած թուղթին վրայ ձիթաիւղ քսել, փաթթուած սմբուկները շարել, աւելցնել քերթուած պանիրը իւրաքանչիւրին վրայ եւ 200 ջերմաստիճան փուռին մէջ եփել 10 վայրկեան:  
Սպասարկելէ առաջ ազատքեղով զարդարել:

Բարի ախորժակ



## Մարզական



Ռաֆֆի Սիկսիան

### ՏԵՂԱԿԱՆ

#### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՑ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵՆՏՐՆԸ

- Յորդանանի մեջ կայացած արեւմտեան Ասիոյ մրցաշարի առաջին փուլի մրցումներուն, Սուրիոյ պասքեթի աղջկանց U16-ի հաւաքականը փայլուն արդիւնքներով կրցաւ արձանագրել երկու յաղթանակ, յետոյ մէկ պարտութիւն: Առաջին օրը Սուրիան 75-63 արդիւնքով պարտութեան մատնեց Սամուայի հաւաքականը, որմէ ետք 86-93 արդիւնքով պարտուեցաւ Ֆիլիպինէն: Երրորդ մրցումը Սուրիոյ հաւաքականին համար ճակատագրական էր եւ ան կրցաւ վերջին երկվայրկեաններուն ձեռք ձգել յաղթանակը 75-74 արդիւնքով յաղթելով Ինտոնեզիոյ հաւաքականին:



Յիշենք, որ Սուրիոյ հաւաքականին մաս կը կազմէր ԶՄԸՄ-ի աղջկանց խումբի խաղացող Սոնիա Չամաքեան, որ իւրաքանչիւր մրցումին կրցաւ իր դրական ներդրումը ունենալ:

- Սուրիոյ տղոց U23-ի հաւաքականը երեք օրերու տեւողութեամբ Երեւանի մէջ իր մասնակցութիւնը բերաւ SADA CUP-ի բարեկամական մրցաշարին: Առաջին օրը Սուրիան 77-61 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Իրանէն, որմէ ետք ան կրցաւ արձանագրել երկու յաղթանակ՝ պարտութեան մատնելով Ամերիկան ներկայացնող խումբը՝ 80-69 եւ Գայանա ներկայացնող խումբը՝ 59-57 արդիւնքով:



- Սուրիոյ պասքեթի տղոց հաւաքականը եռօրեայ տեւողութեամբ Լիբանանի մէջ ուսումնամարզական հաւաք մը կատարեց, ուր երկու բարեկամական մրցումներ ունեցաւ Լիբանանի հաւաքականին հետ:

- Սուրիոյ ֆութպոլի U23-ի հաւաքականը Յորդանանի մէջ իր մասնակցութիւնը բերաւ Ասիոյ ֆութպոլի մրցաշարին, ուր արձանագրեց երեք հերթական յաղթանակներ: Առաջին օրը 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Պաղեստինը, որմէ ետք կրցաւ 1-0 արդիւնքով յաղթել Լիբանանին: Առաջին փուլի վերջին մրցումին 5-0 արդիւնքով յաղթեց Զուելթին եւ գրաւեց խմբակի առաջին դիրքը:

- Սուրիոյ մարզական պատուիրակութիւնը մը ժամանեց Ալճերիոյ Ուահրան քաղաք, իր մասնակցութիւնը բերելու Միջերկրական ծովու մրցաշարի մրցումներուն: Սուրիոյ մարզական խումբերը սահմանափակուեցան անհատական մարզախաղերով:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԵՎԿԱՆԸ ԳՐԱՎԵՑ ՖԻՖԱ-Ի 92-ՐԴ ԴԻՐԸ

Միջազգային ֆութպոլի Դաշնութիւնը՝ ՖԻՖԱ-ն, հրապարակեց ազգային հաւաքականներու դասակարգման հերթական աղիւսակը: Հայաստանի հաւաքականը 1242,42 վարկանիշային կետերով մնաց նոյն՝ 92-րդ հորիզոնականին վրայ: Դասակարգման աղիւսակը 1837 կետերով կը գլխաւորէ Պրագիլի հաւաքականը. անոր կը յաջորդեն Պելճիքան, Արժանթինը, Ֆրանսան, Անգլիան, Սպանիան, Իտալիան, Հոլանտան, Փորթուկալը եւ Դանիան: Սոյն դասաւորման մէջ Սուրիոյ հաւաքականը կը գրաւէ 89-րդ հորիզոնականը:



#### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 396)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբոջեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1						■						
2							■				■	
3	■		■			■			■			
4												
5	■				■							
6		■							■		■	
7				■				■				
8	■		■				■				■	
9									■			
10	■		■									
11								■				
12				■							■	

#### Հորիզոնական

- Արական անուն: 1880-ին ծնած հայ մեծ նկարիչի մականունը:
- Կարճամիտ: Ս. Պատարագին օրհնուած նշխար:
- Հակառակ՝ տարածքի միաւոր: Հաստատական պատասխան:
- Գրաբար՝ օր: Հակառակ՝ լեզուով մը «այո»: Հակառակ՝ շարունակ:
- Խարտեաշ: Իգական անուն:
- Տառի մը դրացիները: Հակառակ՝ երկբարբառ: Խօսք:
- Արժէք: 860: Սարսափ:
- Կրկնուած ձայնաւորներ: Տղամարդ:
- Պտուղներու պարտէզ: Կրկնուած ձայնաւորներ:
- Հակառակ՝ ջրհեղեղէն փրկուած Նահապետ: Նշանակութիւն:
- Ռաֆֆիի պատմական վիպասանութիւններէն: Հակառակ՝ քաջ:
- Կղպանքի ծակ: Աչքերը սեւեռել:


#### Ուղղահայեաց

- Անսահման, անչափ: Տառի մը անունը:
- Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ: Յարաբերական դերանուն: Հակառակ՝ փոքր:
- Քող: Արեւագալ: Հակառակ՝ 9200:
- Տարի: Գոյակ: Հաստատական պատասխան:
- Տիրոջ նուիրուած օր: Լուսավառ սլացիկ երկնային մարմին:
- Մեծ մայր: Պատուար:
- Միջազգային կազմակերպութիւն մը: Հակառակ՝ 430:
- Արցախի առաջին դպրոցը: Իգական անուն:
- Հակառակ՝ տարածքի միաւոր: Թագաւոր:
- Սուրբ գրային մարգարտ: Հակառակ՝ իգական օտար անուն:
- Ձայնանիշ: Բուրդ:
- Շող, փայլք: Վառ, բորբոքուն:

#### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 395)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Խ	Ե	Ն	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
2	Ս	Ն	Ե	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
3	Ս	Ն	Ե	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
4	Կ	Գ	Չ	Ե	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
6	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն
7	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք
8	Գ	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
9	Ս	Ն	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս
10	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն
11	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք
12	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն	Ք	Ն

ԼՈՒՐԵՐ





## «ՀՅՕՐ ՍՓԻՒՔ՝ ՍՕ ԽԱՅԻ ՏԵՍԼԱԿԱՆՈՎ» ԽՈՐԱԳԻՐՈՎ ԽՈՐՀՐԱԺՈՂՈՎ

Գիտակցելով սփիւռքահայ կեանքի տարբեր ոլորտներուն մէջ հայ կնոջ առանցքային դերակատարութեան, ՍՕ Խաչի Շրջանային Վարչութիւնը կազմակերպեց երկօրեայ խորհրդաժողով մը «ՀՅՕՐ Սփիւռք՝ ՍՕ Խաչի Տեսլականով» խորագիրով:

Երկօրեայ խորհրդաժողովը տեղի ունեցաւ Զինգշաբթի 23 եւ Ուրբաթ 24 Յունիս 2022-ին, «Սահակ Նալպանտեան» սրահէն ներս, մասնակցութեամբ նստավայրէն եւ շրջաններէն ժամանած 100 խաչուհիներու:

Խորհրդաժողովի բացումը կատարուեցաւ ՍՕ Խաչի քայլերգով, որմէ ետք ՍՕ Խաչի Շրջանային Վարչութեան ատենապետուհի Սիրան Ամպարեան վարչութեան խօսքը ուղղելով նախ ողջունեց ներկաները, ապա դիտել տուաւ, որ խորհրդաժողովը առիթ մըն է միութեանս ընկերուհիները համախմբելու եւ սփիւռքահայ կեանքին մէջ հայ կնոջ դերակատարութեան անդրադարձող տարբեր նիւթեր արծարծելու:

Ան աւելցնելով ըսաւ, որ ՍՕ Խաչը եղած է ու կը շարունակէ ըլլալ այն միջավայրը, ուր հայ կնոջ կ'ընծայուի անհրաժեշտ բոլոր կարելիութիւնները՝ իր ներուժը ի սպաս դնելու ընկերութեան զարգացման:

Աւարտին, Ամպարեան շնորհակալութիւն յայտնեց ՀՅՕՒ-ի Կեդրոնական Վարչութեան, Պատկան Մարմինին՝ միութեանս անվերապահ աջակցութեան ու զօրակցութեան համար, ապա գնահատանքի խօսք ուղղեց ՍՕ Խաչի մասնաճիւղերուն եւ շրջանային յանձնախումբերուն, որոնք ամենօրեայ աշխատանքով ու նուիրումով անսասան կը պահեն կանացի այս գործունեայ կազմակերպութիւնը:

Խորհրդաժողովի առջանց առաջին զեկուցաբերն էր ՀՅՕՒ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետուհի Սիրան Ամպարեանը:

Ինչ որ հիմագիծի պահպանման ու մեր ազգի զաւակներուն ծառայելու իմաստով ՀՅՕՒ-ը կը շարունակէ մնալ առաջնորդող դերի մէջ, որովհետեւ կը հաւատայ, որ միայն գործով կրնայ ապահովել իր ժողովուրդին վստահութիւնն ու անվերապահ

առնելով Սրբուհի Տիւնիւնը, Չապէլ Ասատուրը եւ Չապէլ Եսայեանը: Ապա անցնելով սփիւռքահայ ժամանակակից կին գրողներու յիշեց Շահանդուխտը, ապա Վեհանոյ Թեքեանը, դիտել տալով որ ան որպէս բանաստեղծ ու արձակագիր



աջակցութիւնը: Ատենապետուհին այնուհետեւ անդրադարձաւ հայրենիքէն ներս, մանաւանդ Արցախի մէջ 44 օրեայ պատերազմին եւ անոր յաջորդող օրերուն ՀՅՕՒ-ի իրագործած ծրագիրներուն, որոնք կը միտին բարօր կեանք ապահովել մեր ազգակիցներուն:

Խորհրդաժողովի երկրորդ զեկուցաբերն էր երկրչփ. Պարգեւ Աւագեան, որ ներկայացուց «Ազգ եւ Պետութիւն» դասախօսութիւնը: Ան պարզաբանեց «ազգ», «սփիւռք» եւ «հայրենիք» հասկացութիւնները, ապա անդրադարձաւ սփիւռքահայութեան դիմագրաւած դժուարութիւններուն, առաջարկեց լուծումներ ու լուսարձակի տակ առաւ հայրենիքի ներկայ քաղաքական իրավիճակը, պարզելով ազգային կեանքը յուզող շարք մը հարցեր:

կարելորդ գրիչ է սփիւռքահայ գրականութեան մէջ, որովհետեւ ընթերցողին կը պարզէ հայ կնոջ ապրումները եւ ըլլալով սփիւռքահայ կին իր գրականութեամբ ձեռք կ'երկարէ հայ ժողովուրդին՝ երգելով հայրենիքն ու հայրենասիրութիւնը, իսկ հայ մշակութային արժեքները միշտ ներկայ են իր գործերուն մէջ: Այնու-

խորհրդաժողովին ներկայացուցան նաեւ երկու այլ դասախօսութիւններ խաչուհիներու կողմէ: Առաջինը՝ «Շուկայավարում», ներկայացուց Անի Մինասեան: Ան ներկայեցուց հետաքրքրական մատուցումով ծանօթացուց ճափոնցի Իշիքաուայի տնտեսական տեսութիւնը, ըստ որուն ծրագրուած աշխատանքն է, որ յաջողութեամբ կը պսակուի: Այսպէս յաջող շուկայավարման պայմանները՝ ծանուցում, վաճառանիշ, շուկայի սերտորութիւն, եւ այլն....

Աւարտին ան ներկայացուց ՍՕ Խաչի նորաստեղծ Narod վաճառանիշը, անոր որդեգրման նպատակն ու արդիւնքները, ապա ներկաները ծանօթացան Ձեռարուեստի եւ Աշխատանցի յանձնախումբերու նոր արտադրութիւններուն:

Դասախօսութիւններուն շարքին եր նաեւ հոգեբանական խորհրդատու Ալին Շահինեանի «Հաղորդակցութեան Յմտութիւններ» նիւթը: Դասախօսը նիւթին ներկայացման կողքին պատրաստած էր հարցաթերթիկներ, որպէսզի իւրաքանչիւր մասնակից ծանօթանայ իր հմտութիւններուն:

Իւրաքանչիւր դասախօսութեան աւարտին մասնակիցներուն առիթ տրուեցաւ հարցումներ ուղղելու դասախօսներուն:

Խորհրդաժողովը ուշագրաւ էր կազմակերպուածութեամբ եւ օրակարգերու ճշդապահ կիրարկմամբ:



նապետ դոկտ. Նայիրի Տերտերեան: Ան խօսեցաւ «Հայ Օգնութեան Միութեան Գաղափարախօսութիւնն ու Ծրագիրները» նիւթին շուրջ, հակիրճ ձեւով ներկայացնելով դար մը եւ աւելի Հայ Օգնութեան Միութեան աշխարհի տարածքին ծաւալուն աշխատանքները, հաստատելով անոր անգերազանցելի բարեսիրական դերակատարութիւնը եւ հայրենիքի, եւ՛ Սփիւռքի մէջ: Ան շեշտեց, որ ազգա-

խորհրդաժողովի երրորդ զեկուցաբերը բանաստեղծ, արձակագիր, կրթական մշակ Մարուշ Երամեանն էր:

Երամեան ներկայացուց տարբեր ժամանակաշրջաններու մէջ ապրած սփիւռքահայ կին գրողներ, անդրադարձաւ անոնց իւրայատկութիւններուն, ապրած պայմաններուն, դիմագրաւած դժուարութիւններուն եւ ստեղծագործական կեանքին, յատկապէս լուսարձակի տակ



հետեւ անդրադարձաւ այլ գրողներու առանձնացնելով հալէպահայ շարք մը գրողներ, ինչպէս Լալա Միսկարեան, Պերճուհի Աւետեան, Նանոր Ինճեճիկեան, Մարիանա Պերթիզլեան եւ ուրիշներ:

Խորհրդաժողովի չորրորդ զեկուցաբերը բանաստեղծ ու արձակագիր, Համագայինի Հայագիտական Հիմնարկի դասախօս Լեւոն Շառոյեանն էր, որ ներկայացուց սփիւռքահայ կնոց իրապարակագիրները՝ Հայկանոյշ Մառք եւ Սիրան Սեգա: Շառոյեան յայտնեց, որ երկու հայուհիները եղած են սփիւռքահայ իրապարակագրութեան իւրայատուկ դէմքերէն, որոնցմէ առաջինը Պոլսոյ մէջ իրապարակած է «Հայ կին» կիսամեայ հանդէսը, իսկ երկրորդը Պէյրութի մէջ լոյս ընծայած է «Երիտասարդ Հայուհի» ամսագիրը: Շառոյեան անդրադարձաւ անոնց ստեղծագործական ոճին ու աշխարհայայտացքին:

Իւրաքանչիւր մասնակիցի համար պատրաստուած էր յատուկ թղթածրար: Մասնակիցները բաժնուած էին 8 խմբակներու, որոնք կը կրէին սփիւռքահայ թերթերու անուններ՝ «Մարմարա», «Ակօս», «Ազդարար», «Նայիրի», «Չարթօնք», «Ազդակ», «Հայրենիք» եւ «Գանձասար»: Խմբակային դրութիւնը պատճառ դարձաւ, որ գործնական աշխատանքները արդիւնաւետ ըլլան:

Խորհրդաժողովը առիթ մը եղաւ խաչուհիներուն թարմացնելու իրենց գիտելիքները, գործակցելու, անդրադառնալու Սփիւռքի կազմակերպ գոյութեան պահպանման մէջ իրենց վստահուած դերին ու ներկայացնելու առաջարկներ այս իմաստով:

Խորհրդաժողովի աւարտին մասնակիցները ունեցան յիշատակի խմբակարգ մը ու ստացան համապատասխան հաստատագիրներ: **Սեան Ազգրիկեան-Պարմաքեան**